

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՅՈՐԲԵԼԵԱՆԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Սուլթան Համիտ իր գահակալութեան յրբեկանը կատարելով իսլամական աւանդութեանց հակառակ վարուած եթէ չհամարուեցաւ ալ բայց իս սլիֆաներու պատմութեանը մէջ նորութիւն մը արձանադրող եղաւ: Յոբելեարը չուզեց նաև սպասել ըստն և հինգ տարիներու շրջանի մը ամբողջակի բոլորմանը: Նորութիւնը և անոր իրականացմանը համար հապճեպը եթէ ունայնասէր եւ անհամբեր փառամուլութեան թելադրանքներուն վերագրենք կրնանք սխալիլ: Թիւրքիոյ միապետը անհամբերութեան ակտով վարակեալ չէ, ակտ մը որ քաղաքական անձնաւորութեանց մահաբեր է: Միանգամայն, ան նպատակ նորութեանց սիրահարի համբան ալ չվայելեր: Սուլթան Համիտ ամէն որոշում յետ հանդարտ խորհրդածութեան կուտայ, հետեւանքները սրբան հնար է ճշգրտապէս նախատեսելու զգուշաւորութեամբ:

Յոբելեան հանդէսին գաղափարը տեսակ մը ընդհանուր քուէարկութեան նպատակաւ յղացուեցաւ: Թիւրքիոյ միահեծան իշխանը ուզեց որ թէ՛ Եւրոպան, թէ՛ իր հպատակները, թէ՛ իսլամական աշխարհը բաւոր գարու մը իր վարչութիւնը վաւերացնեն: Եւ որովհետեւ մտտահ էր թէ նպատատուր հանգամանքներէ շրջապատուած է, օգտակար ոեպեց հանրային կարծիքին անմիջապէս դիմում ընել: Դեռ տարուան մը սպասումը անխոհեմութիւն կը թուէր, արդի կացութեան յանկարծական փոփոխումի մը վախովը:

Յոբելեանին յաջողութիւնը որ սուլթանին նախատեսութիւնները արդարացուց, հայ ազգը կը պարտաւորէ լրջօրէն ընել և ուսումնասիրել Եւրոպայի արդի ուղղութիւնը հանդէպ Թիւրքիոյ, և միանգամայն, թէ՛ միջազգային քաղաքականութեան, թէ՛ օսմանեան կայսրութեան մէջ սուլթան Համիտին պիտի ըմբռնէ յ:

\* \* \*

Եւրոպայի թէ՛ միապետական, թէ՛ սահմանադրական, թէ՛ հանրապետական իշխանութիւնները, իբր իրենց ժողովուրդներուն օրինաւոր ներկայացուցիչները, Թիւրքիոյ սուլթանը շերտապէս շնորհաւորեցին իր ըստն և հինգ տարուան կառավարութեանը ամօթիւ: Օսմանցիներուն միապետը շնորհաւորող պետութիւնները երեք դասի կը բաժնուին: Նախ կուգան Աւստրիա եւ Իտալիա, որոնք Թիւրքիոյ ո՛չ թշնամիները ո՛չ ալ բարեկամները հանդիսացած են մինչեւ հիմակ. չէզոքներ են ապագայի վերապահումով: Իրենց յայտնած խնդակցութիւնները պարզապէս քաղաքալսրական պարտականութեան մը գործադրութիւնն է, առանց ո՛ր եւ ուշադրանշանակութեան: Ետքէն կուգան Գերմանիա եւ Ռուսիա: Յոբելեանին ամօթիւ երկուքն ալ իրենց աւանդական քաղաքականութիւնը շարունակեցին: Վիլհելմ կայսրը 1889էն ի վեր բնաւ օր մը հակասուլթանական եղած չէ, միշտ բարեացակամ հանդիսացեր է Թիւրքիոյ, ուստի յոբելեանին իր մասնակցութիւնը այնպիսի բնական գործողութիւն մըն է որուն վրայ և ոչ իսկ բոլոր մը մտածելու պէտք կայ: Ռուսիա իր գործը դիտէ: Ի հարկին ջերմ բարեկամ, ի հարկին անհաշտ թշնամի, բայց համբոյրն ալ թունաւոր, բռունցքն ալ մահացու: Երէկ իզմիրի առջեւ իր նաւատորմը կը լուսազարդէր ի պատիւ սուլթանին, սւ թանկ կազին ընծայաբերութիւններով կը շոյէր իսլամներու խալիֆան. վաղը սպանական ծանուցազրբրով կը տագնապէր զայն. իսկ երբեք չպարբր Թիւրքիոյ հողին տակականներ փորելու աշխատանքն: Ուստի աւելորդ է նկատողութեան առնել սուլթանին շաղկաւած ուսուական խնդակցութիւնները:

Ֆրանսա եւ Անգլիա սուլթանին հաճոյանալու իրենց ըզձանքը հանդիսաւոր ցոյցերով յայտնեցին: Այս երկու պետութեանց քաղաքականութիւնն է որ մեր ամբողջ մտահոգութիւնը կը գրաւէ. վասն զի ասանցմէ շատ բան կրնանք յուսալ, շատ բան ալ կրնանք վախնալ:

Ֆրանսա եւ Անգլիա 1894էն 1896 Թիւրքիոյ նըկատմամբ վարանստ եւ անգիտակից քաղաքականութեան հետեւեցան: Հայկական խնդրին զանազան երևոյթներու միջոցին այս երկու պետութիւնները քրիտոնէից գաւտին հակառակ շարժեցան, ինչպէս շարժեցան Ռուսիա և Գերմանիա, բայց նաև օսմանեան իշխանութեան ալ

Թշնամի չերեցան. ու չէզոք ալ չմնացին: Երկուքն ալ քը-  
րիստոնէից վրայ իրենց ազդեցութեան սաստկապէս տը-  
կարացուցին տեսան, վասն զի անոնց բարիք մը հայթայ-  
թելու անկարող գտնուեցան: Միննոյն ատեն սուլթանին  
Թշնամութիւնն ու արհամարհանքն ալ իրենց բաժինը  
եղաւ: Սուլթան Համիտ չէր կրնար համակրիլ երկու պե-  
տութեանց որոնք հաշտ աչքով չէին դիտեր Հայաստանի  
կոտորածները, որոնց Պոլսոյ զեսպանները զինքը նեղը  
կը սնէին. բայց չէր կրնար նաև յարգել այդ երկու մեծ  
ազգերը որոնք Ռուսիոյ եւ Գերմանիոյ միջամտութեամբ  
անկարողութեան դատապարտուած կը մնային քրիստոնե-  
աներու նպաստաւոր ո՛ր եւ է կարգազրութիւններ ը-  
նելու:

Ֆրանսա եւ Անգլիա շուտով անդրադարձան թէ ա-  
ռանց քրիստոնէից ծառայութիւն մը մատուցած ըլլալու  
իրենց ալ մեծապէս վնասուած էին իրենց արեւելեան  
շահերուն մէջ, ասպարէզը բաց ձգելով երկու հզօր մը-  
ցակիցներու առջեւ, Ռուսիոյ եւ Գերմանիոյ:

Հայաստանի կոտորածներէն թիւ ետքը, 1896ին  
սկիզբները, Անգլիա իր արեւելեան քաղաքականութիւնը  
որ թէ՛ Ազատականներու եւ թէ՛ Պահպանողականներու  
վարչութեանց օրով չափազանցօրէն հակաթրքական շեշ-  
տած էր, սկսաւ կամաց կամաց թրքասիրականի յոռե-  
շըրջել: Ֆրանսա Հայկական խնդրին մէջ Անգլիոյ չափ  
յառաջացած չէր, մանաւանդ թէ իր կոչումին համա-  
պատասխանող քաղաքականութեան մը չէր հետեւած,  
նուսական նիզակակցութեան պատճառաւ: Ֆրանսա քա-  
ջալերուեցաւ Անգլիոյ օրինակէն, եւ սուլթանին ան-  
հաճոյ ո՛ր եւ է ձգտում ցոյց չտուաւ: Երկու պետութիւն-  
ներն ալ թիւրքիոյ նկատմամբ իրենց բարեացակամու-  
թեանը իբր գրաւական, Պոլսէն հեռացուցին իրենց զեօ-  
պանները, Պ. Գանպոնը եւ Սըր Ֆիլիպ Բըրրին որոնք  
Հայկական խնդրին առթիւ սուլթանին տհաճելի եղած  
էին: Սուլթանասէր քաղաքականութիւնը վերսկսած էր,  
թէ՛ Անգլիա եւ թէ՛ Ֆրանսա փափագող չըլլալով որ սուլ-  
թանը իրենցմէ յուսահատած կամ ահաբեկ եղած, բո-  
լորովին Ռուսիոյ եւ Գերմանիոյ անձնատուր ըլլայ:

Սուլթանը Ռուսիոյ առջեւ կը բռնէր եւ Գերմանիոյ  
պահանջումները կ'ընդունէր հարկէն ստիպուած. արեւ-  
մըտեան երկու մեծ պետութիւններուն իրենց արեւելեան  
նախկին քաղաքականութեան վերադարձը սուլթանին հա-  
մար ազատագրութեան աւետիսն էր, զոր խնդրութեամբ  
ընդունեց: Ֆրանսա եւ Անգլիա ի նպաստ Հայոց այլ եւս  
ո՛ր եւ է պահանջում չներկայացնելով, սուլթանը ստիպ-  
ուած չէր Ռուսիոյ եւ Գերմանիոյ անմիջական օգնու-  
թեանը դիմում ընել, հետեւաբար եւ կ'ազատէր անոնց  
ամէն պայմաններուն ստորագրելու հարկէն: Արեւելեան  
խնդրին մէջ դարձեալ ինքն էր որ գերագոյն վարիչը կը  
հանդիսանար:

Կ. Պոլիս կատարուած յօդուածներն Անգլիոյ մասնակ-

ցութեան պայմանները թիւրքիոյ հետ քաղաքական մը-  
տերութեան մը իբր ցոյցը կրնայ նկատուիլ, ցոյց մը  
որ ուղղակի հակառուսական է, եւ ազդարարութիւն մը  
Գերմանիոյ:

Անգլիական կառավարութիւնը պարտաւորեալ չէր  
սուլթանը պատուել վիկթորիա Թագուհիին ինքնազիր  
ուղերձովը, եւ ոչ ալ Լեմնոսի առջև լուսազարդել Անգ-  
լիոյ նաւատորմը: Շնորհաւորական հեռագիր մը եւ զեօ-  
պանական այցելութիւն մը կրնային բաւել միջազգային  
քաղաքավարական պահանջումներուն: Սուլթանի նա-  
խարարութիւնը մեծափայլ հանդիսաւորութեամբ մը Խրիմի  
վազորային յիշեցուց օսմանցիներուն:

Թրքասիրական այս ցոյցը տեղի կուեննար երեսփո-  
խանական ընտրութեանց նախընթաց օրը. նախարա-  
րութիւնը վստահ էր թէ սուլթանին յանուն Անգլիոյ ըն-  
ծայուած մեծ արանքը երկրին հանրային զգացումը պիտի  
չվիրաւորէր: Չորս տարի է որ, Կ. Պոլսոյ օգոստոս 26ի  
մեծ կոտորածէն սկսեալ, Սուլթանի ջանադիր եղաւ ա-  
րիւնի թուականներու յիշատակները, 95-96ը, աղօտա-  
ցընել Անգլիոյ մաքին մէջ: Ազատականները պահպա-  
նողական կուսակցութեան էն մեծ զօրավիզը հանդիսա-  
ցան այս քաղաքականութեան յաջողութիւնը ապահո-  
վելու համար: Լորտ Բոզպէրի, ազատականներու պետը,  
Կլատտթոնի դէմ կը կանգնէր Լիվուրբուլի ահագնազորդ  
ճառէն յետոյ: Ու երբ 1900 օգոստոս 31ը հասաւ, ար-  
դէն 1896 օգոստոս 26ը մոռցուած էր: Անգլիացիին որ  
քաղաքական կարգապահութեան գերագոյն մտատիպարը  
կը մարմնացնէ, վստահեցաւ իր նախարարներուն իմաս-  
տութեանը Արեւելեան խնդրին մէջ: Շահու քաղաքա-  
կանութիւնը անգամ մը եւս յաղթած էր զգացումի քաղա-  
քականութեան:

Լոնտոնի դահլիճին ներքին վրդովմանը յայտարար  
մէկ նշանն է սուլթանին բարեկամութիւնը շահելու ըզ-  
ձանքը: Այդ վրդովումը անգլիական շահերու վասնդումի  
երկիւղէն կը ծնի: Գեռ քանի մը ամիս առաջ անանկ  
կ'երևնար որ Անգլիա իբր թէ այլ եւս անտարբեր է  
թիւրքիոյ ապագային համար: Հեղինակաւոր թերթեր,  
ինչպէս Թայմզ, կը հաւաստէին թէ Հայաստանի եւ Կ.  
Պոլսոյ Ռուսացմէ գրաւումը Անգլիոյ համար սպառնալիք  
մը չէ. ու ոհա հիմակ կը տագնապին այդ պատահակա-  
նութեան երկիւղովը: Եւ այդ վախը կը մղէ Սուլթանի  
կառավարութիւնը թիւրքիան պահպանելու համար ամէն  
ջանք ի գործ դնել. եւ այս նպատակին հասնելու առաջին  
պայմանն է թիւրքիոյ սուլթանը սիրաշահիլ եւ զայն ա-  
զատել Ռուսիոյ ազդեցութիւնէն:

Թրեւելեանին առթիւ պետութեանց կողմէն, մասնաւո-  
րապէս Անգլիայէն սուլթանին ընծայուած պատիւները, ո-  
րոնք թիւրքիոյ գլխին պաշտպանողական հովանուո-  
րութեան մը երևոյթը կրնան ներկայացնել, ուղղակի  
հարուստներ են ուսական քաղաքականութեան: Բե-

զրպուրկի զիւանագիտութիւնը վայրագ բայց զերազանց-  
 օրէն ճարպիկ քաղաք սկանութեամբ յաջողած էր թիւր-  
 քիան կղզիացնել Եւրոպայի մէջ: Հայկական կոտո-  
 րածնները գոր Ռուսիա քաջալերած էր, եւ անոնց գոր-  
 ծադրութեան համար հարկ եղած զիւրութիւնները բն-  
 ծայած էր իր մեքենայութիւններովը, հայկական կոտո-  
 րածնները Ռուսիոյ յաղթանակը կ'երաշխաւորէին թիւր-  
 քիոյ վրայ: Ազատական կուսակցութիւնը միաբերան ա-  
 դադակեց թէ Հայաստանն ալ, Պոլիսն ալ Ռուսիոյ թո-  
 ղունք, բաւական է որ անիկա քրիստոնեայ հայերը  
 փրկէ: Այս գաղափարը սկսաւ պահպանողականներուն  
 մէջ եւս տարածուիլ: Ռուսիոյ յաջողութիւնը ապահով-  
 եալ կը թուէր, բայց Սուլպերիի կառավարութիւնը ու-  
 ըիչ ուղղութիւն տուաւ Անգլիոյ հանրային կարծիքին,  
 եւ Ռուսիա հիմակ իր նպատակին ժամանելու շատ մօտ  
 չ'երևնար:

Պետութիւնները, որոնց միանալու հարկադրեալ էր և  
 Ռուսիա, մասնակցելով յորելեանին, անգամ մը եւս հաս-  
 տատեցին թիւրքիոյ պահպանութիւն համար իրենց տրա-  
 մադրութիւնը: Սուլթանը օսմանեան կայսրութիւնը կը  
 մարմնացնէ, ինքը ինչ որ ալ ըլլայ անձամբ. անոր զէմ  
 Եւրոպայի թշնամութիւնը թիւրքիոյ տկարացմանը եւ  
 քայքայմանը պիտի ծառայէ: Այս համոզմամբ է որ Եւրո-  
 պա, հակառակ հայկական կոտորածներուն ազգած ոռո-  
 կումին, պարտաւորուեցաւ սուլթանը բռնել:

Մեծ ազգերու իւրաքանչիւրին մամուլը քանի մը տա-  
 ըի է թէ՛ ամէն մէկ երկրի մասնաւոր և թէ՛ Եւրոպայի  
 ընդհանուր շահերուն գիտակցութեամբ կը շարժի: Յո-  
 բելեանին առթիւ թրքասէր ուղղութիւնը շեշտուեցաւ:

Եթէ անգլիական մամուլը միայն նկատողութեան  
 առնենք, կը տեսնենք թէ ազատական թերթերը իրենց  
 կուսակցական աւանդութեանց չ'զրժելու համար յորել-  
 եանին քիչ մը հակառակ խօսեցան, բայց առանց կոուղ  
 համոզումի ուժեղութեամբ: Գիտէին թէ իրենց հրատա-  
 րակութիւնները ս' և է ազգեցութիւն պիտի չունենան, ուռ-  
 տի սովորութիւնը չ'մտնալու համար միայն գրեցին քիչ  
 մը բան: Կարգ մը թերթեր բարեացակամ չէզոքութեան  
 հետեւեցան. իսկ շատ կարեւոր թերթեր, որոնց զուէրը  
 Սթանտարտ, ուղղակի պաշտպան հանդիսացան սուլթա-  
 նին և իր կայսրութեան: Գրեթէ ամէն երկրի մամուլը  
 այս միևնոյն ուղղութեան հետեւեցաւ. լուռ մնացողնե-  
 րը մեծամասնութիւն կը կազմեն. բայց լուռութիւնը իսկ  
 ձեռնտու է թիւրքիոյ:

Տիւմար ենթադրութիւն մըն է հաւատալ թէ Եւրոպայի  
 մամուլը իր ամբողջութեամբը սուլթանին գրպանը մտած  
 է: Այսպիսի ամբաստանութեան մը ստոգութիւնը մարդ-  
 կութիւնը յուսահատութեան կը դատապարտէր: Ինչպէ՞ս  
 առանց սոսկումի մտաբերել թէ արեւելեան բռնապետ մը  
 կարող է գնել բոլոր մտքերը, խնդհերը, իրեն ստրկացնել  
 քաղաքակրթութիւնը, հայրենասիրութիւնը: Անտարա-

կոյս վաճառողներ կան, բայց նոյնիսկ անոնք ալ իրենց  
 երկրին շահերուն պաշտպանութիւնը ստանձնած կը կար-  
 ծեն ինքզինքնին, թէ և փոխարինութեամբ:

Ընդհանուր երեւոյթէն ան կը տեսնուի թէ պետու-  
 թիւնները թիւրքիան պահպանել կ'ուզեն. առաջադրու-  
 թիւն մըն է որ մեզի օգտակար է: Հիւանդ մը որպէ՛ս զի  
 առողջանայ, նախ պէտք է որ չ'մեռնի. Հայաստան որպէ՛ս  
 զի բարեկարգուի նախ պէտք է որ չ'մեռնի, այսինքն՝ Ռու-  
 սաստանի մաս չ'կտրուի:

Եւրոպայի համար հանդարտութեան ապագայ մը  
 հաւանական կը թուի: Հարաւային Ափրիկէի խնդիրը վեր-  
 ջացաւ, Մալթայոյն—Արևելքի գծուարութիւնները կը հար-  
 թուին: Դիւանագիտութիւնը իրեն ծանր մտահոգութիւն  
 պատճառող ո' և է զբաղում չունի, եւ կրնայ Արևելեան  
 խնդիրը իր հոգածութեան առարկան ընել: Երբ Եւրոպա  
 թիւրքիան պահպանել ուզէ, նպատակին չ'կրնար հաս-  
 նիլ առանց այդ կայսրութիւնը հետզհետէ բարենորոգելու:  
 Բարեկարգութեանց գործադրութեանը համար պետու-  
 թիւնները իրենց բարեկամական ազգեցութեամբը աւելի  
 դիւրաւ կրնան ներգործել սուլթանին վրայ քան թէ իրենց  
 թշնամութեամբը: Սասունի ջարդէն յետոյ պետութիւններէ  
 ումանց սուլթանին դէմ խիստ քաղաքականութեանէն ո' և  
 է բարիք չ'ծնաւ մեզի: Անշուշտ դիտուած է թէ թիւր-  
 քիոյ քրիստոնեաները փոքր ինչ աւելի հանգիստ կ'ընեն  
 ամէն ատեն որ Փրանսա և Անգլիա օսմանեան իշխանու-  
 թեան հետ սերտ բարեկամութիւն կը հաստատեն: Հիմակ  
 իսկ կը տեսնենք որ սուլթանը կը ջանայ ո' եւ է պզտիկ  
 կոտորած կամ հերքել, կամ մեղմացնելու աշխատիլ,  
 վասն զի չ'ուզէր որ Անգլիոյ եւ Փրանսայի հանրային  
 զգացումը իրեն դէմ զրգոտի:



Յօբելեանին առթիւ այս քանի մը դիտողութիւնները  
 Հայ ժողովրդին ներկայացնելով, կը փափաքինք փաստա-  
 կար հակամիտութիւն մը դարձանել: Երբ կը տեսնենք  
 թէ Եւրոպա սուլթանին համակրական ցոյց մը կ'ընէ, ան-  
 միջպէս կը սկսինք յուսահատիլ, կարծելով թէ ա'լ մեզի  
 համար ամէն ինչ կորսուած է: Այսպիսի վախ մը շուտով  
 կը գրաւէ մեր միտքը, վասն զի ոչ նուազ արագօրէն կը  
 բռնկինք երբ միևնոյն Եւրոպայէն ո' և է հակաթրքական  
 արտայայտութիւն երեւան կուգայ. ան ատենն ալ կը  
 կարծենք որ միացեալ նաւատորմները վոսփորէն անմի-  
 ջպէս ներս պիտի մտնեն: Հայ ազգին մտաւորական  
 և հոգեկան միջին կացութիւնը այս է, կացութիւն մը որ-  
 մէն ոչ միայն կարելի չէ օգուտ մը սպասել ալ նաեւ շատ  
 մեծ վտանգներ ալ վախնալ:

Ո՛չ բորբոքինք, ո՛չ սմբինք, այլ զիանք, քննենք,  
 խորհինք և ըստ այնմ գործենք: Հայ ազգին համար լա-  
 ւագոյն ապագայ մը յուսալի է եթէ Եւրոպայի տեսու-

Թեանց համակերպելու և ըստ այնմ աշխատելու հետա-  
մտինք ազգովին, եւ ոչ թէ միայն կուսակցաբար: Թիւր-  
քիոյ նկատմամբ Եւրոպայի տեսութիւնները եւրոպական  
շահերու պաշտպանութեան ըմբռնումովը յայտնուած են:  
Հայոց շահերը չեն հակառակիւր Եւրոպացիներու շահե-  
րուն — բացի ուսականներէն:

Այս ճշմարտութիւնը բազմաթիւ յօդուածներով հաս-  
տատուած է այս էջերուն մէջ: Հիմակ ժամանակն է որ  
Եւրոպա եւ Ամերիկա բնակող Թիւրքիացի հայերը Եւրո-  
պայի համարուած հայ ազգին վերադարձնելու աշխա-  
տին, աշակցելով անոնց որ այս պարտականութիւնը  
հանդարտօրէն կատարելու կը հետամտին տարիներէ  
ի վեր:

Ազգային քաղաքականութիւն մը, որուն առաջադու-  
թիւնը Եւրոպան սիրաշահիլ ըլլայ, երբ ազգովին գոր-  
ծադրենք, վստահ ըլլանք որ մեր հայրենիքին մեծկակ  
ծառայութիւն մը պիտի մատուցանենք:

**ԲԱՐԻՋԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ**

**ԲԱՐԻՋ, հոկտեմբեր 5**

Խաղաղութեան Տիեզերական Ըրդ Համաժողովը,  
որ Յուստանիոյ տարածքէն գումարուեցաւ Բարիդ, և այս  
տարի բացառիկ կարեւորութիւն մը ու կշիռ մը ունեցաւ,  
հայկական խնդրին առնել տուաւ քայլ մը որ, կարելի է  
ըսել, ամէնէն կարեւորն է մեր դատին ի նպաստ եղած  
բարոյական ցոյցերուն: Անշուշտ անմիջական արդիւնքներ  
չէ որ կը սպասենք Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ հայ-  
կական խնդրին ու և էնորոգ ծառայումէն. բայց անուրա-  
նալի է որ որչափ աւելի մեր դատը ճանչցուի մարդկու-  
թեան մէջ, որչափ աւելի վառ մնայ ան մարդկային մը-  
տահոգութեանց մէջ, այնչափ աւելի օգտակարապէս կըր-  
նանք կրթնիլ մեր շուրջը յարուցուած ու արժարժուած  
համակրանքին՝ երբոր պարագաները ներկայանան:

Հայկական խնդիրը Խաղաղութեան Համաժողովին  
սեղանին վրայ դնելու նախաձեռնութիւնը կը վերաբերի  
Պ. Համբարձում Առաքելեանի, որ Համաժողովին կ'ան-  
դամակցէր: Համաժողովը իր օրակարգին վրայ չունէր  
հայկական հարցը, և Պ. Առաքելեան օտարութեամբ նա-  
խապատրաստական կարգ մը ձեռնարկներու դիմել՝ զայն  
Համաժողովին սեղանին վրայ դնել տալու համար:

Ահաւասիկ այն յիշատակագիրը զոր Պ. Առաքելեան  
ներկայացուց Համաժողովին:

Ամէն դէպք որ կրնայ վտանգ մը դառնալ Խաղաղու-  
թեան համար եւ շահագրգռել խաղաղասիրական շարժու-  
մը, պէտք է ուշադրութիւնը գրաւէ Համաժողովի մը ո-  
րուն միակ նպատակն է Տիեզերական Խաղաղութիւնը:  
Հայ ժողովրդին արդի կացութիւնը, Տիեզերներ և Պարոն-  
ներ, ճշդիւ այն պարագաներէն մին կը ներկայացնէ, եւ  
ահա առոր համար է որ կուզանք պահ մը այս Համաժո-  
ղովին բարեացակամ ուշադրութիւնը հրաւիրել հայկա-  
կան խնդրին վրայ, այսինքն Թիւրքիոյ Հայոց վիճակին  
բարեկաման խնդրին վրայ:

Եւ նախ, բռնեք որ Հայկական խնդիրը ներքին քա-  
ղաքականութեան խնդիր մը չէ. միջազգային խնդիր մըն  
է, որովհետեւ միջազգային դաշնագրեր, մասնաւորապէս  
Սան-Սթեֆանոյի դաշնագրին 16րդ յօդուածը, Պերլինի  
դաշնագրին 61րդ յօդուածը, և 1895 յուլիս 11ի բարե-  
նորոգմանց ծրագիրը զոր Պետութիւնները կազմեցին և  
սուլթանը ինքը ստորագրեց, զայն միջազգային հարցե-  
րուն շարքը մացուցած են: Միւս կողմէ, նախորդ Հա-  
մաժողովներուն տուած որոշումները, մասնաւորապէս Մի-  
ջազգային Օրինագրքին 17րդ յօդուածը որ կ'ըսէ թէ՛

«Ազգերը իրաւունք ունին վարչական խորհուրդ մը  
«կարգելու այն Պետութեան մօտ որ ուրիշին փնտս կը  
«հասցնէ իր հարստութիւնը մտնելով կամ իր հպատակ-  
«ներուն մէկ մասին ջարդը կը կազմակերպէ կամ կը  
«թոյլատրէ...»:

Ներկայ Համաժողովին ոչ միայն իրաւունք կուտան,  
այլ եւ վրան պարտք կը դնեն այս խնդրով զբաղելու եւ  
հարկ եղած միջոցները ձեռք առնելու՝ Միջազգային Օ-  
րինագրքին յիշեալ յօդուածին գործադրութեանը համար:

Ընդհանուրին կարծիքով, Արեւելի կացութիւնը աշ-  
խարհի Խաղաղութեան սեծագոյն վտանգներէն մին է:  
Արդէն, 1894ի սկիզբը, Պ. Բօլ Գանպոն, որ այն ա-  
տեն Ֆրանսայի դեսպան էր Կ. Պոլիս, ամէն զովետի ար-  
ժանի սրատեսութեամբ մը կը մարդարկանար Արեւելեան  
խնդրին բացումը Ասիոյ կողմէն, հիմնուելով զկարծու-  
վրայ որոնց արիւնալի թատերաւայրը կը սկսէր ըլլալ օս-  
մանեան Հայաստանը:

Այդ Արեւելեան խնդիրը պայթեցաւ Սասունի ջարդե-  
րով, որոնց հետեւեցաւ հայկական նահանգներուն և Կ.  
Պոլսոյ կոտորածներուն ահսի շարքը, և պահ մը քիչ  
մնաց որ բաղխում մը առաջ բերըր այն Պետութեանց մի-  
ջե որոնք, զաշնագրերուն զօրութեամբ, պարտականու-  
թիւն յանձն առած կին այս գծաղղ հայ ժողովրդին բա-  
րեկեցութեանը հսկելու:

Մենք այստեղ չենք եկած, Պարոններ, այս մարտի-  
րոս ժողովրդին արտունջները կամ բողոքները բերելու  
ձեզի, թէկուտ իր արիւնը միշտ կը հոսի ու Սպաղանքի

բողոքովին նոր կատարածները տխուր այժմութիւն մը կուտան իր գատին: Այսօր ոչ ոք կ'անդիտանայ արհաւիրքները զրուսեան մը որ տարիներէ ի վեր բնաջինջ ընելու վրայ է ցեղ մը որ մարկիութեան ամէնէն հին ցեղերուն մէջ կը հաշուի. ոչ ոք ալ կ'անդիտանայ նոյնպէս կեանքի և բարեկեցութեան իրաւունքները որ այդ ազգը ձեռք բերած է՝ մեծ պետութեանց երաշխաւորութեան ներքեւ: Եւ ըստ որում Հայերը այդ իրաւունքներուն դիտակցութիւնը ունին, ըստ որում անաանկի լուծի մը տակ կը հեծեն, և որովհետեւ զոյութեան տարրական իրաւունքները անգամ կը զլացուին իրենց, բնականաբար ստիպուած են իրենց բոլոր ճիգը թափել՝ կ'ամ այդ իրաւունքները ձեռք բերելու, կ'ամ աշխարհիս երեսէն անհետանալու համար: Աւ կարելի է, Պարսներ, որ այդպիսի կացութեամբ մը տիեզերական խաղաղութիւնը երբեք ապահովուած ըլլայ:

Ահա ինչու համար է որ խօսք կ'առնենք այս մեծ ժողովին մէջ որ նպատակներուն ամէնէն վսեմը առաջադրած է ինքիքին, ինչորեւի՞ իրմէ որ յանուն տիեզերական խաղաղութեան ձայնը բարձրացնէ ի նպաստ ժողովրդի մը որ մէկ բան միայն կ'ուզէ, խաղաղութեամբ ապրիլ, խաղաղութեամբ վայելի իր աշխատութեան պըտուղները, և Ասիոյ այդ մասին մէջ իր արևմտեան քաղաքաբնութեան ծաւալման միջնորդի դերը կատարել: Մերիններէն աւելի հեղինակաւոր ձայներ ձեռք պիտի ըսեն թէ այս ժողովուրդը, իր նախասահմանութեամբ, իր աւանդութիւններով, իր գաստիարակութեամբ, կարող է այդ դերին, զոր ի գործ դրած է, ամէն անգամ որ շունչ առնելու բուռ մը թողած են իրեն, և զոր ամէն ժամանակէ աւելի կորուստով պիտի վերստանան՝ եթէ ապրելու էական պայմանները ապահովուին իրեն:

Մնաց որ, ճշգիւ կոչ մը չէ որ կ'ուղղենք ձեզի: Չեր հովանաւորութեան Յանձնախմբին ցանկին մէջ կը գտնենք թէ՛ Ֆրանսացի և թէ՛ ուրիշ ազգի բազմաթիւ անձնաւորութեանց անունները, որոնք խօսքով ու զրչով բարձրաձայն իրենց համակրանքը յայտնած են այս գծաղղ ժողովրդին գատին համար: Մենք պիտի չմոռնանք թէ ինչ եռանդով կը նկրտէին ժողովուրդներուն և կառավարութեանց խիղճը արթնցնել՝ վերջ մը զնելու համար արհաւիրքներուն որոնց մէջ կը տապալուի այս ժողովուրդը, և անոր ապահովելու համար գոնէ այն տարրական երաշխաւորութիւնները զորոնք իրեն կը ճանչնան միջազգային դաշնագրերը: Հիմակ որ այս Համաժողովին մէջ համախմբուած են ատոնք, իրենց համար քաղցր պիտի ըլլայ ձայներնին և կոչներնին միացնել՝ ամէն ժամանակէ աւելի եռանդով պահանջելու համար այն տնօրինութիւնները զորոնք անհրաժեշտ կը նկատէին՝ այդ ժողովուրդը ազատելու համար իր եղկելի վիճակէն և անոր ապահովելու համար զոյութեան սկզբնական իրաւունքները:

Չեր ջատագոված խաղաղաօրական շարժումին մէջ, Պարսներ, Հայոց գատը իր սահմանուած տեղը ունի: Միջազգային դաշնագրերը հայկական խնդիրը անբաժանելի մասը դարձուցած են Արեւելեան խնդրին, որուն յանկարծական պայթումները այնքան մեծապէս կը շահագրգռեն բոլոր այն անձերը որոնք իրենքզիրենք նւիրած են ժողովուրդներու միջև զժողովիւնները բառնալու և կառավարութեանց միջև բաղխումի պատճառները նուազեցնելու: Մենք կը կարծենք, Պարսներ, թէ ձեր յայտագրին մէջ արձանագրելով շարք մը ձեռնարկներ և ճիգեր, որպէս զի կառավարութեանց և հանրային կարծիքին վրայ ազդէ՝ վերջ մը տալու համար տիեզերական խաղաղութեան այն սպասելիքին որ միշտ թաքուն կը գտնուի բազմատանջ Հայաստանի արիւնահոսութեանց և աւերակներուն մէջ, — այսինքն հարկ եղած միջոցները ձեռք առնելով՝ գործադրելու եւ իրագործելու համար Միջազգային Օրինագրքին 17րդ յօդուածը, — ձեր առաջադրած գեղեցկագոյն նպատակներէն մին գործադրած պիտի ըլլայիք և արժանաւորապէս ծառայած քաղաքաւորութեան և մարդկութեան:

Մենք կը կարծենք նաև թէ Համաժողովը, իր գործը դիւրացնելու համար, կարող է յանձնախումբ մը անուանել, որ պաշտօն ունենայ այս հարցը կատարելապէս ուսումնասիրելու, և նշանակելու Միջազգային Օրինագրքին 17րդ յօդուածին իրականացման միջոցները:

Պ. Առաքելեանի հետ, այս յիշատակագիրը ստորագրած էին Բեգրպուրկի Գիտութեանց Ակադեմիային թղթակից անգամ Պ. Քավալկուքի, Ռուսքի Վիտոմուսի տնօրէն եւ խմբագրապետ Պ. Սապալկուքի, Պելժեքայի Երեւակոյտին անգամ և Պրիսկա միջազգային իրաւաբանութեան Բրոֆէսոր Պ. Լաֆոնդէն, ռուս հրապարակագիր Պ. Նովիքով, Պրիսկաի նոր Համալսարանին Բրոֆէսոր Պ. Էսովէն տը Ռոպերդի (ռուս), Ֆրանսայի Բրոֆէսոր Պ. Մարիլիէ, Մոսկուայի Համալսարանին Բրոֆէսոր Պ. Ղամպարեան, Պ. Արշակ Չօպանեան, Տր. Լօրիս—Մէլիքոֆ, Տր. Եւալեան և այլն:

Ըստ որում Համաժողովին օրակարգին մէջ հայկական խնդիրը չկար: Պ. Առաքելեանի յիշատակագիրը դրկուեցաւ յատկապէս կազմուած մասնախմբի մը, որ յետ խորհրդակցութեան որոշեց ժողովին օրակարգը անցնել զայն: Առաջին յաջողութիւն մըն էր առիկա: Խնդրին տեղեկաբեր կարգուեցաւ Պ. Նովիքով, եւ որոշուեցաւ Չինաստանի եւ Թրանսպալի հարցերէն յետոյ զբաղիլ հայկականով:

Հոկտեմբեր 4ին օր կարգը եկաւ հայկական խնդրին: Ժողովին կը նախագահէր Ֆրանսայի ականաւոր գիտնական Պ. Եարլ Ռիշէ, որ հրաւիրեց Պ. Առաքելեանը իր թովը նստիլ, իբր հեղինակ առաջարկութեան որուն ոյժ

կուտային ուրիշներ ալ, եւ կարգալ իր յիշատակագիրը :

Պ. Նովիցովի յանձնուեցաւ կարգալ յիշատակագիրը որուն պատճենը քիչ մը վերը գրինք: Ընթերցումէն յետոյ, Պ. Նովիցով յայտնեց թէ մասնախուսքը, Համաժողովին կը բերէ իր քուէարկած հետեեալ առաջարկութիւնը:

«Խաղաղութեան Միջազգային Ինստիտուտի Համաժողովը, նկատողութեան առնելէ յետոյ Հայաստանի մասին յիշատակագիրը զոր ներկայացուցած են Պ. Պ. Ղաւպարեան, Քավալէֆոքի, Սապալէֆոքի, Լա Ֆրանկէն, աբ Ռոպերդի, Նովիցովի, Լիսիէն Լե Ֆուայէ, Առաքելեան, Լորիս-Մէլիքեան, կարծիք կը յայտնէ թէ Հայոց ջարդերը վերջին ժամանակներս գործուած ամէնէն աւելի նողկալի արարքներէն մին կը կազմեն: Իր համակարանքը կը յայտնէ այդ դժբաղդ ազգին համար, և բազմաձայն կը յայտնէ որ օսմանեան կառավարութեան վրայ պարտք գրուի յարգելու Հայոց անձեռնմխելի իրաւունքները, որոնք Սան-Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրով երաշխաւորուած են:»

Նախագահը ժողովին ներկայացնելով այս առաջարկութիւնը վիճարանութեան գրաւ գայն:

Պ. աբ Ռոպերդի, ուստի մեծանուն իմաստասէրն ու ընկերաբանը, բարձր բարձաւ այդ առաջարկութեան դէմ, զայն բոլորովին մեղմ դասնելով: Խեղճ Հայաստանը, ըստաւ, զոչ կ'երթայ երկու աւելի մօտիկ այժմութեանց, թրանսփառի և Չինաստանի: Եւ սակայն իր վիճակը նոյնքան շահեկան է որքան Պէրսիանը. 300,000 մարդ, կին եւ տղայ որոնք վեհապետի մը հրամանով կը խողխողուին, ասիկա չի բաւեր մարդկային գիտակցութիւնը սարսուղացնելու: Քանի որ Եւրոպա օչինապէս իրաւունք ունի բարենորոգումներ և խաղաղութիւն հարկադրելու Բ. Դրան, ինչո՞ւ մինչեւ հիմակ ըրած չէ: Վատութեան և անտարբերութեան ինչ շունչ է որ կը փչէ այժմ քաղաքակիրթ աշխարհին վրայ, որ անտարբեր հանդիսատես կը մնայ ամէնէն ահռելի սճիւրներուն: Պատմութիւնը ինչ պիտի մտածէ մեր ժամանակին վրայ:

Ու ահանաւոր Բրոֆէսորը առաջարկեց մասնախմբին առաջարկութեան կցել հետեւեալ յաւելումը:

«Համաժողովը ցաւ կը յայտնէ թէ բաժանումները, «նախանձութիւնները և իւրաքանչիւր Պետութեանց մասանաւոր շահերուն մէկ անձուկ ըմբռնումը մինչև հիմակ «արգիլած են յիշեալ դաշնագրերը ստորագրած պետութիւններուն՝ իրենց ամէնէն տարրական պարտքը կատարելու հանդէպ ժողովրդի մը զոր պաշտպանել հարկադրուած էին՝ իրաւագիտական արժէք սնեցող բացորոշ յանձնարարութեամբ մը: Կը յուսայ թէ տիեզերական գիտակցութեան ընդլզումը եւ քաղաքակիրթ աշխարհին յայտնութիւնը «բոլորովին վերջի վերջոյ եւրոպական կառավարութիւնները պիտի մղեն արմատական լուծում մը՝ տալու այս հայկական թաղածախի ինստիտուտին: Ինչպէս որ դեռ վերջերս, եղաւ

«Կրետէի համար:»

Երիտասարդ-Թիւրքերու Մեշվէթի Թերթին տնօրէն Պ. Ահմէտ Ռիգա հակառակ խօսեցաւ այս առաջարկութեանց: Իր կարծիքով հայկական խնդիր չկայ, այլ ընդհանուր Թիւրքիոյ խնդիր: Թիւրքերը այնքան կը տառապին հան որքան Հայերը: Պէտք է երկրին ամբողջ դուրսէն բարեփոխել եւ ոչ թէ մինակ Հայերունը: Մնացորդ, Հայերը զատ ազգ մը չեն կազմեր, եւ մեծամասնութիւն իսկ չունին իրենց բնակած հողին վրայ:

Պ. Չօպանեան ուժգնապէս բողոքեց այս տեսութեան դէմ: Սխալ է թէ Թիւրքերուն ու Հայերուն տառապանքները նոյն են: Հայերը ուրոյն իրաւունքներ ձեռք բերած են այսօր իրենց հայրերուն հողին վրայ, իրենց արիւնջը նուիրագործուած: Ու անշուշտ, իբր ազգ ապրելու շատ աւելի իրաւունքներ ունին քան Թիւրքերը:

Վիճարանութիւնը ընդարձակուեցաւ այս կէտին վրայ: Բայց Համաժողովը հետզհետէ մերժեց Պ. Ահմէտ Ռիգայի առաջարկը, որ Թիւրքիոյ համար ընդհանուր բորենորոգում կը խնդրէր, Եւրոպայի Պ. Վուարդի առաջարկը որ բոլոր հպատակ ազգերուն համար համակրանքի բանաձեւ մըն է: Ու, ի վերջոյ, եղած առաջարկութեանց վրայ մէկ քանի պզտիկ փոփոխութիւններ ընելով, հետեւեալ որոշումը քուէարկեց.

«Համաժողովը, «Յետ նկատողութեան առնելու Հայաստանի մասին «յիշատակագիր մը զոր ներկայացուցած էին հայ հրապարակագիր Պ. Հ. Առաքելեան եւ ուրիշներ, կարծիք կը յայտնէ թէ Հայոց ջարդերը վերջին ժամանակներս գործուած ամէնէն աւելի նողկալի արարքներէն մին կը կազմեն: Իր համակրանքը կը յայտնէ այդ դժբաղդ ժողովրդին համար, և բազմաձայն կը յայտնէ որ օսմանեան կառավարութեան վրայ պարտք գրուի յարգելու Հայոց անձեռնմխելի իրաւունքները, որոնք Պերլինի դաշնագրով երաշխաւորուած են:

«Համաժողովը կը ցաւի որ բաժանումները, նախանձութիւնները եւ իւրաքանչիւր Պետութեան մասանաւոր շահերուն մէկ անձուկ ըմբռնումը մինչև հիմակ արգիլած են Սան-Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրերը ստորագրող պետութիւններուն՝ իրենց ամէնէն տարրական պարտքը կատարելու հանդէպ ժողովրդի մը, զոր պաշտպանելու հարկադրուած էին՝ իրաւագիտական արժէք ունեցող բացորոշ յանձնարարութեամբ մը: Բայց Համաժողովը միանգամայն կը յուսայ թէ տիեզերական գիտակցութեան ընդլզումը և քաղաքակիրթ աշխարհին յայտնութիւնը «վերջի վերջոյ եւրոպական կառավարութեանց ցոյց պիտի տան հայկական խնդրին մէկ բանաւոր և արմատական լուծումը:»

Հայկական խնդիրը, այս որոշումով, այլ ևս մշտապէս կը մնայ Համաժողովի օրակարգին վրայ, եւ Պէրլինի խաղաղութեան Մնայուն Դիւանը իր գործունէութեան մէկ

մասը պիտի նուիրէ հայկական հարցին:

Համաժողովին տասներորդ գումարու՛մը յառաջիկայ տարի տեղի պիտի ունենայ Կլասիօ:

Ներկայ Համաժողովը փակուեցաւ հոկտեմբեր 6ին, եւ երեկոյին հացկերոյթ մը տրուեցաւ բոլոր անդամակիցներուն: Սեղանին վրայ տիկին Սէվոնին, բաժակ պարպելով բոլոր ոտնակոխ ու ճգմտած ազգերուն, Հայաստանի կ'ուզողէր սա յուզիչ դիմառնութիւնը.

«Կենս'ցդ կը խմեմ, բազմաշարշար Հայաստան, դո՛ւն զոր հարիւր անգամ արինեցին, ու հարիւր անգամ վերածնար. զոր եւրոպական վատութիւնը բարբարոսներուն որս թողուց, — դո՛ւն որուն կիները, Սասունի մէջ, մահը ամօթէն նախամեծար համարեցիք, և զաւակներնին իրենց մերկ լանջքին վրայ սեղմած, անդունդը նեաուեցան:»

\* \*

Ընկերվարական Միջազգային Համաժողովը, որ այս տարի Բարիզ գումարուեցաւ, իր սեպտեմբեր 27ի նըստին մէջ, աշխարհի բոլոր բնատրոններուն և հարստահարողներուն դէմ իր գայլոյթը յայտնող բանաձև մը քուէարկեց, որուն մաս կը կազմէր հետեւեալը.

Բարիզի Միջազգային Ընկերվարական Համաժողովը, անգամ մը եւս հաստատելով եղբայրական համակրանքի զգացումները որ պարտին միացնել բոլոր ժողովուրդները, գայլոյթով կը բողոքէ Հայաստանի մէջ գործուած բռնութեանց, անդթութեանց, ջարդերուն դէմ, աշխարհի աշխատաւորներուն մատնանիչ կ'ընէ զանազան կառավարութեանց եղեռնական մեղսակցութիւնը, եւ ընկերվարական խորհրդարանական խմբակներուն կը յանձնարարէ ամէն առթիւ միջամտել ի նպաստ նողկալիօրէն հարստահարեալ Հայ ժողովրդին, սրուն Համաժողովը կը զրկէ իր սերտ և խանդազին համբերաշնութեան հաւաստիքը:»

Հայոց մասին համակրութեան ուրիշ ցոյց մըն ալ Մարդկութեան Համաժողովէն եկաւ, որուն Պ. Հ. Առաքելեան յիշատակագիր մը ներկայացուցած էր, նկարագրելով թիւրքիոյ Հայոց եղկելի կացութիւնը:

Համաժողովը միաձայնութեամբ հետեւեալ որոշումը քուէարկեց իր հոկտեմբեր 2ի երկկոյեան նստին մէջ.

«Մարդկութեան Համաժողովը, նկատելով որ, 1. թիւրքիոյ հայերը միշտ կը հալածուին, բարբարոսութեան եւ անգթութեան արարքներուն ենթակայ են, եւ 2. թէ դժբաղջ Հայերը միշտ կը խողխողուին, կը կախուին, կ'այլուին,

«Կը զսրովէ եւ կը դատապարտէ բարբարոսութեան եւ գազանութեան այլարարքները, ու բաղձանք կը յայտնէ որ ամէն անոնք որ մարդկութեան գիտակցութիւնը ունին, գործեն՝ վերջ մը դնելու համար մարդկութեան դէմ գործուած այս սճրին:»

## ՉՈՒԱՐԹ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրասէր բարեկամի մը հետ 1899ին մատենագրական խօսակցութիւն մը ունեցանք Ալեկոյանցիօ: Երբեմն կ'անդրադառնամ թէ այն խնդիրները որոնց վրայ կարծիքներ փոխանակած էինք, կը յուզուին ուրիշ շատերու մտքին մէջ ալ նաեւ: Աւելորդ չեմ համարիր այդ օրուան մեր տեսութեանց քանի մը կէտերը ծանօթացնել անոնց որոնք կը սիրեն մտաւոր կեանքի ներկայացուցած զանազան կնճռոտութիւնները քննել եւ լուծել:

\* \*

— Անզգայութեան թէ մտքի հիւժման վերագրենք, կը հարցնէր բարեկամս, մեր արդի վիպական եւ բանաստեղծական գրականութեան ամուլթիւնը: Հայ ցեղին աղէտները մեզի դեռ չի տուին հատոր մը որ ժողովուրդը սարսուցնէր և աչքերէն արցունք բերէր:

— Դեռ կանուխ է, պատասխանեցի:

— Կանո՛ւխ:

— Այո՛:

— Ուրեմն բնութիւնը օրտի պայթումի՛ն համար ալ ժամանակ սահմանած է, ինչպէս ծննդաբերութեան համար:

— Շահարբաս մեզի Արաքսէն անցնել տալէն քանի տարի ետքը ունեցանք Մայր-Արաքսին:

Բարեկամս սկաւ ժպտիլ:

— Կը կարծէք, շարունակեցի, որ Արաքսի ջուրերէն ճշուողները իրենց աղէտները երգելու ժամանակ ունեցած ըլլային:

— Ուրեմն պարբերով ֆամառի մը գալուստի՛ն պիտի սպասենք:

— Ո՛չ: «Հայաստանի օրօրը», «Կաղանդը», «Արիւնոտ յիշատակները» «Խնձորը» «Հայ Տառապան» քնն» «Յունաստանի Յիշատակները» գրող սերունդը արդէն հեղինակած է առաջին էջերը այն մատենագրութեան որ եղեռնաւոր թուականը պիտի երգէ, նկարէ, իմաստասիրէ:

— Շարունակութիւնը:

— Շարունակութիւնը սուրը կ'ընէ: Սուրը հայ ժողովրդին աչքէն արցունք շատ կը բերէ. գրիչը անոր մըրցակցելու անկարող է:

— Հանգստանալէ յետո՛յ պիտի ունենանք այն գրեցիչ որոնց կ'ընտանք:

— Կարծեմ: Պոլի՛օ էիք 94ի երկրաշարժին:

— Այո՛:

—Մտքերնիդ բերեց այդ օրուան կեանքը: Հողը կը ցնցուէր. ոչ ոք կրնար գուշակել թէ ի՞նչ կրնար պատահիլ քառորդ մը ետքը: Տեղաբանը ահագնապէս յուզիչ էր. միլիոն մը ժողովուրդ, ահաբեկ, զարհուրեալ, փողոցները թափած: Երեւակայեցէք այդ կեանքին անդադրում յարատեւութեամբ շարունակութիւնը, պիտի գտնուէին բանաստեղծներ, վիպասաններ որ հանգարտօրէն նոստած այդ կեանքին երևոյթները օրը օրին ուսումնասիրելու եւ նկարագրելու հետամտէին:

—Օ՛, չէ՛,

—Եւ սակայն ամէնքն ալ յուզեալ, խռովեալ էին. Մեծ յուզումներն են որ մեծ գրականութիւնը կը ստեղծեն, յետ հանգարտութեան ռակայն: Մեծ ալեկոծութեան մը վտանգներուն ենթարկուած էք երբեք:

—Ո՛չ:

—Քիչ շատ տատանումներու ինչ ըլլալը գիտեմ. անոնցմէ կրնամ երևակայել սոսկալի փոթորիկի մը բռնուողներուն տագնապը: Թո՛ղ անոնց մէջ բան ստեղծ մը, վիպասան մը գտնուի. կրնա՞յ բան մը գրել:

—Չեմ կարծեր:

Բայց օր մը այդ զրագէտը պիտի տեսայի փոթորկին յիշատակովը. ու ոչ ոք պիտի կրնայ, եւ թագրելով տաղանդներու հաւասարութիւնը, այնքան հզօր գեղեցկագիտութեամբ երջել, նկարագրել ալեկոծեալ ծովուն վեհութիւնը եւ մարդուն հոգեկան վիճակը որքան ան որ յիշատակովը կրնայ իր աչքին առջեւ պարզել ահեղ տեսարանը, և սարսփիլ այդ բոպէներուն զգայնութիւններովը:

—Պիտի գայ այդ հանգարտութեան օրը, ու երբ:

—«Վաղը Աստուծոյ է», ըսած է բանաստեղծը: Ծակատագրին հաւատալու փորձութիւնը կունենամ երբեմն:

—Այսինքն յուսահատելու տրամագիր է՞ք:

—Ո՛չ. բայց քաղաքական տեսութեանց մէջ չմոլորինք: Գրականութեան սահմաններէն չեմ շեղիր: Մենք հայերս մեր միտքը չենք վարժեցուցած մէթոտով խորհելու, մէթոտով գործելու. մէկ ճիւղէն միւսը կը ցատկենք միշտ: Հիմակ ալ ահա մենք նոյնը կ'ընենք ձեզի հետ: Ուստի ազգային քաղաքականութիւնը ձգենք, եւ ազգային գրականութեան վրայ միայն խօսինք: Մեր ապագայ գրականութիւնը որուն նմանը մեր պատմութեան մէջ, գոնէ մեր քրիստոնէացման թուականէն ի վեր, չենք ունեցած կը պատրաստուի:

—Մեր աղէտներուն շնորհիւ:

—Անշուշտ. առանց մեծ աղէտի չենք կրնար օրտի մեծ գրականութիւնը ունենալ:

—Բայց մեր պատմութիւնը 1894-1896 թուականները դերագանցող սարսափի օրեր կարծեմ բաւականէն աւելի արձանագրած է:

—Այո՛, նիւթապէս գերագանցող, այլ ո՛չ բարոյապէս:

—Մութ կը խօսիք:

—Չիս միշտ քաղաքականութեան կնուանին վրայ կը մղէք: Կարճ կ'ապեմ: Մեր ազգին զխէն շատ փորձանքներ անցած են. բայց ահեղաշոյնը 1895ին տեսանք: Մենք, ինչպէս մեր պատմութիւնը ցոյց կուտայ, կամ համբերութեամբ սպասած ենք որ մեր երկիրը արշաւողները ձգեն երթան, կամ համակերպած ենք մեր վիճակին: Պերլինի վեհաժողովէն յետոյ համակերպութեան ընդունակութիւննիս կորսնցուցինք, վասն զի փրկութեան յոյսը ունեցանք: Քիչ մը առաջ փոթորկի վրայ կը խօսէի. ենթադրեցէք տագնապի մատնուած շոգենաւ մը որ զինքը փրկելու ուրիշ շոգենաւ մը չնշմարէ, եւ այսպէս թէ այնպէս կուզէ նաւահանգիստ մը հասնիլ, ժամէ ժամ աւելի յուսահատ: Ինչ ահա յանկարծ մէկ երկու շոգենաւ կ'երկն, կը յօտենան վտանգեալ նաւուն, եւ ազատութեան պարանները կ'երկնցնեն: Ինչ երանութեան զգացում է որ այդ բոպէին կ'ողողէ վտանգեալներուն սիրտը:

—Անճառելի երանութեան բոպէ ըսուածը ըլլալու է:

—Բայց ճիշտ այդ բոպէին օգնութեան հասնող նաւերը յանկարծ կը հեռանան. իր աշդին ձգելով նաւերկեալ խեղճ շոգենաւը, ու ծովը ալ աւելի կը զայրանայ հետզհետէ: Ե՛րբ աւելի գթազղ էին ուղեւորները. փրկութեան ապահով յոյսը չտեսած թէ հիմակ:

—Պատասխանին համար չեմ վարանիր:

—Ճիշտ ու ճիշտ Հայոց վիճակը:

—Ուրեմն պիտի ընկղմինք. եւ ալ ի՞նչ գրականութիւն սպասենք:

—Այդ վախը զեռ չունիմ: Չեմ ըսեր թէ փրկութիւննիս ապահովեալ է, բայց կրնանք ապահովել, պայմաններով որոնց վրայ ուրիշ առթիւ կը խօսինք: Այժմ մեր ազգին փոթորկեալ նաւը նաւահանգստի մը շուրջը կը դեգերի. ինչո՞ւ չյուսանք թէ ներս պիտի մտնենք:

—Շատ երկարեցաւ:

—Անցեալ շաբթուան մեծ ալեկոծութիւնը գիտես:

—Այո՛:

—Մարտիլի շոգենաւը մինչեւ Ալեկսանդրիոյ նաւահանգստին մուտքը հասաւ, բայց երեք օր չկրցաւ ներս մտնել. սարսափելի կերպով ալեկոծեալ ծովուն վրայ դեգերեցաւ, բայց վերջապէս մտաւ: Ունենալով այդ յոյսը և միշտ անոր իրականացմանը աշխատելով, զանանք մեր գրականութեան:

—Կ'ըսէիք թէ մեծ գրականութիւնը ստեղծուելու վրայ է:

—Այո՛, եւ երեք սերունդի ստեղծագործութիւնը պիտի ըլլայ:

—Երեք սերունդի՞: Գալի՞ք:

—Ա՛, չէ. անցնելու վրայ եղող սերունդին, արդէն պատրաստուածին, և անոր որ ահա կը հասնի:

—Երկար ատենի գործ:

—Առանց Ժամանակին օգնութեան մեծ բան մը

չ'ստեղծուիր, ըսած են: Հասարակ տեղիք մը որ սակայն միշտ իբր նորութիւն մը կրկնելու է Հայոց:

Բարեկամս խնդալ սկսաւ:

—Քարը ինձի է:

—Ամէնու ալ: Չեմ յիշեր որ իմաստասէրը իրաւամբ ըսած է թէ՛ համբերութիւնը քաջութիւններուն զըմուարագոյնն է: Այս վերջին տեսններս այդ քաջութիւնը մեզի պակսեցաւ: Գրականութիւնը սակայն մեր անհամբեր կեանքին չհպատակիր: Բազմաթիւ պայմաններ պէտք է որ մէկտեղ գան, ու պատրաստեն գրականութիւն ստեղծելու եղանակ մը:

—Որո՞նք են ուրեմն այդ երեք սերունդները որոնք իրար շարունակելով վերջը վերջը մեզի պիտի տան այն գրքերը որոնց կը սպասենք:

—Այն սերունդը որ 1870ին զեռ նոր շրջանաւարտ կ'ըլլար, և հիմակ ալ ևս իր հանրային եւ գրական շրջանը աւարտելու վրայ է: Այն սերունդը որ 1890ին արդէն պատանեկութենէ երիտասարդութեան դարձած էր ու կը գործէր, կը գրէր քանի մը տարիէ ի վեր: Եւ այն որ զեռ պարօցն է այսօր:

Հոս ընդհանուր տեսութիւն մը պարզեցի 1870-1900ի մեր ազգային կեանքին վրայ: Այդ կեանքին ծրնունդն են մեր միտքը ու սիրտը, որ նոր գրականութեան մը հիմը արդէն դրած են: Երկար կ'ըլլայ այդ տեսութիւնները պարզել հիմակ հոս. առիթ կ'ունենամ անոնց վերագառնալու:

Մեր խօսակցութիւնը յետոյ դարձաւ զուարթ գրականութեան շուրջը:

—Մինչ մեր տրտմութեան գրականութիւնը դանդաղ դանդաղ կը յառաջանայ, Չուարթութեան գրականութիւնը արդէն իր գլուխ գործոցները տուաւ մեզի. «Մակարոյժները» և «Մարտիկ Աղան»: Միթէ հեգնաբաններն ալ ժամանակի ծնունդ չեն:

—Եր'ար ժամանակի ծնունդ չեն, ալ ժամանակին: Խօսք տրտմութիւնը որ ժողովուրդները յուզող ու զօրացնող գրական գործերը կը ներշնչէ, ժամանակին աշակցութեանը կարօտ է: Գարունն ու ամառը պէտք են որպէս զի աշնան տրտմութեան հրապոյրը զգանք: Գարնան միշտ կը հրճուինք, ու երբ զուարթութեան վրայ խօսինք, «գարնանային»ը կը կցենք: Տե՛ս, «Մարտիկ Աղայ»ին հեղինակը. զեռ եւ ոչ իսկ օրինաւորապէս երիտասարդ կըրնայ սեպուիլ: Քսան տարի ետքը աւելի իմաստասիրական գաղափարներով լեցուն, աւելի գրական պերճութեամբ հրապուրիչ գիրք մը պիտի գրէ. բայց երբեք այն համով հոտով հեգնաբանութիւնը որ «Մարտիկ Աղան» ժամանակիս էն երեւելի գործերէն մին ըրաւ:

—Գաղտնիքը.

—Գաղտնիքը հոս է որ «Մարտիկ Աղան» անմեղ սրտի մը, պարզ մտքի մը ծնունդն է:

—Անմեղութիւն. բայց շարամտութեան գլուխ գործոցը կը կարծէինք:

—Շատ հրճուանք զգացիք ու խնդացիք զայն կարգալով:

—Անտարակոյս.

—Չարութիւնը չհրճուեցներ, եւ ոչ ալ սրտէն խընդում կը ժայթքեցնէ: Վասն զի շարութիւնը ազեղ է:

—Ուրեմն շարածիճութիւն ըսենք:

—Եթէ անդիտակից շարածիճութիւն ըսէի թերեւ ճշմարտութեան մօտենաք: Այդ նորածիլ գրագէտը, որ սակայն բնածին յատկութիւններով օժտուած է, քիչ մը, կամ թէ ճիշտ ու ճիշտ կը նմանի պղտիկ տղու մը որ պաշտելի անմեղութեամբ տուն կը կործանէ: Ֆրանսացիներուն «սարսափելի տղայ» կոչածն է: «Տղաս, մայրիկդ տօնն է, կը հարցնէ դարպասի հետամուտ երիտասարդ մը, սրտտոգողով: —Այո՛: —Հայրիկդ: —Ոչ. մայրիկիս ակօսները շինել տարու գնաց: Կը զգա՞ր խեղճ տղան թէ ինչ հարուած կուտար մօրը:

—Ու երբ իմացո՞ւր ապտակը կուտէ, թէ եւ անմեղօրէն յանցաւոր է:

—Այո՛:

—Անոր համար Պարսլըն ալ կ'ապտակեն:

—Բայց ապտակը մօրը զաղտնիքը եւ չգարձներ: Տարիքն է որ ապտակը կ'իջեցնէ:

—Մակարոյժներուն հեղինակին բերանն ալ կաթ կը հոտի:

—Անոր անմեղութեանը համար երզում չեմ ըներ: Դէպի երիտասարդութիւն կը յառաջանայ: Իր ժպիտը ալ մանկունակ չէ: Մարտիկ Աղան գրողը կը ցնծայ, կը ծափէ տղու մը պէս որ գայտագեղի մը կենդանիներուն հանդիսատես է: Երօտ-Վահրամ՝ իմաստասէր է: Պարսլըն՝ կերական բարքերու հրաշալի լուսանկարիչ մը, աննշմարելի դիմագծերն իսկ երեւան հանող: Միւսը՝ պատկերահան մը, որուն ձեռքը վրձին մը կայ. արուեստագէտ մըն է որ գիտէ թէ ամէն մէկ զէմքի ո՞ր գծերը պէտք է ստուերի մէջ ձգել, ո՞րը երեւան հանել. որը խոշորցնելու է, ո՞րը պղտիկցնելու:

—Անմեղ թէ մեղաւոր, չէք կարծեր որ այդ հեգնաբանութիւնները գաղափարային դատերու կը վնասեն:

—Որովհետեւ հարուածներ են:

—Այո՛:

—Գիրը հնարուելէ ի վեր ամէն հարուածեայ իր պաշտպանողականը կը փնտռէ այն փաստաբանութեան մէջ թէ՛ իրեն տրուած հարուածը իր ներկայացուցած գաղափարին կ'ուղղուի: Ամէն անգամ որ կրօնաւորներու դէմ խարազան մը շլեր է, հեգնութեան շփոթ մը ուղղած է: «Կրօնքը կը կործանէք» պողոսքեր են: Եւ ոսկայն կրօնքը միշտ մնացած է կրօնք: Արդար գայրոյթը զեղծութեանը ջնջելու, զեղծարարները պակսեցնելու կը ծառայեն: Ամէն գաղափար՝ բլլայ կրօնական, ըլլայ տնտեսական,

ըլայ քաղաքական, ըլլայ գրական, ինչկ'ըլլայ ըլլայ, կը հզօրանայ, կ'ուժովնայ մարմնի մը պէս որմէն ապակա- նարար հիւթերը դուրս կը նետուին:

—Արդար զայրոյթ ըսիք. բայց ամէն զայրոյթ ար- դար է:

—Ինչ որ անարդար է ան զեղծում է. ամէն զեղծում անհետանալու դատապարտուած է:

—Ո՞վ պիտի որոշէ արդարը անարդարէն:

—Խիղճը, Գիտակցութիւնը. ուր որ ազատութիւն կը տիրէ հո՞ն խղճի եւ գիտակցութեան յաղթանակը ապա- հովեալ է: Ազատութիւն մամուլին, ազատութիւն խօսքի, ազատութիւն ընկերակցութեան եւ այն ժամանակ բարո- յապէս ծանր հիւանդները միայն կ'ահաբեկին: Քառորդ դարու մը փորձառութեամբս կը խօսիմ:

—Լա՛ւ. բայց մեր սերունդը ս՞ր օրուան կը սպասէ տրտմութեան զրականութիւնը ստեղծելու:

—Մենք զեռ վերջնապէս տրտումները չենք, վասն զի յուսահատները չենք: Այո՛, միշտ սրտազոզի մէջ ենք, բայց միշտ վաղուան արեւը կը յուսանք: Այդ արեւուն ծագմանը կը հատանք: Եթէ տրտում ենք երէկուան հա- մար, զուարթ ենք վաղուան համար: Ետ անգամ հըռ- շակուած ճշմարտութիւն մը չէ՞ որ մեծ ուրախութիւնները մեծ վշտերէ կը ծնին:

—Ձեր սերունդը այդ մեծ վշտերը զգացած է, ա- ոանց սակայն զեռ մեծ ուրախութեանց համը առած ըլլալու:

—Այո՛:

—Ինչո՞ւ ուրեմն ձեր լացի արցունքները չէք թափեր, մինչ նորերը իրենց զուարթութեան արտասուցը զսպելո փոյթ չեն ըններ:

—Երբեմն երբեմն թատրոն գացեր եւ յղբիւրդութեանցս հանդիսատես գտնուած էք, այնպէս չէ՞:

—Այո՛:

—Անշուշտ դիտած էք որ երբ տեսարաններ սրտտ- ճըմլիկ են Լրիկ մարդիկ ինչքան ալ խորապէս յուզուին, հզօր ջանքեր կ'ընեն ինքզինքնին բռնելու, որպէս զի չի լան: Կատակերգութեան մը համար ոչ ոք իր խնդուքը կը բռնէ: Երկու արցունքներուն համար այս տարբերու- թեան պատճառաւ դուք ձեզի հարցուցէք, վասն զի դուք ալ փորձը ձեր վրայ բրած ըլլալու էք: Տրտմութիւնը ա- մօթխած է: Կինները «տկար էակ» կը նկատուին թերեւ անոր համար որ իրենց վշտին արտայայտութիւնները զսպելու կարող չեն: Տրտմութիւնը զօրեղ զգացումի կը բարձրանայ երբ ինքն իր վրայ ամփսփուելով լուռ կը մնայ: Խորապէս զգացուած տրտմութիւնը ազգերու համար վառօղ է գոր պէտք է իրենց սրտին մէջ մթերեն ու չօր պահեն: Արցունքով թրջուած վառօղը իր պայ- թսմի յատկութիւնները կը կորսնցնէ: Զուարթութիւնը մարմինը կուտճացնէ. եւ ծառերուն պէս մարմինն ալ իր

ջուրը կուզէ որ մեծնայ եւ թարմ մնայ: Զուարթութեան արցունքը բարերար է:

Մեր խօսակցութիւնը երկարեցաւ զուարթութեան պատմութիւններով. անոնք ալ գրելու առիթը հաւանօրէն կը ներկայանայ:

Ա. Ա.

### ՌՈՒՍԻՈՅ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կովկասեան կառավարչապետին տնօրինութեամբը թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը լուծ- ուած է: Այս որոշումը պաշտօնապէս հրատարակուեցաւ: Գուժը որքան որ ահեղապէս կը վիրաւորէ ամէն Հայու սիրտ, բայց եւ այնպէս անսպասելի հարուածի մը սաստ- կութեամբը յանկարծակիի չբերաւ մեզի: Հայութիւնը ջնջելու սահմանուած ամէն տնօրինութիւն կը սպասենք Ռուսիայէն, ինչպէս այս էջերուն մէջ յտճախ խօսուած է: Ռուսական կառավարութիւնը հայ ցեղը կարճ ժամանակէ մը բոլորովին Ռուսաց մէջ ձուլելու որոշումը վերջ- նապէս տուած ըլլալով, անողոքելի հանդարտութեամբ իր քաղաքականութիւնը կը գործադրէ, վստահ ըլլալով որ ամենափոքրիկ ընդդիմադրութեան հանդիպելու վտանգը պիտի չտեսնէ:

Հրատարակչական Ընկերութիւնը քսան տարիէ ի վեր Հաստատուած էր թիֆլիս, ուսական օրէնքներուն տրամադրութեանց գործադրութեամբ: Իր երկարատեւ կեանքը եւ պաշտօնական հանգամանքը ապահովութիւն կուտային ապագային համար: Իր օրինական հիմնար- կութիւն կտակներ ալ կ'ընդունէր, ինչպէս վերջի ժամա- նակներս կարեւոր գումար մը ստացաւ:

Հրատարակչական Ընկերութիւնը կը տպագրէր հա- յերէն լեզուաւ գրքեր, և զանոնք աժանագին կը տա- րածէր ժողովրդին մէջ: Ընտրութիւնները ընդհանրապէս նպատակայարմար եղած են: Հրատարակութեանց ամ- բողջութիւնը ներդաշնակաւոր այլազանութիւն մը կը ներ- կայացնէ: Գրական, վիպական, իմաստասիրական, պատմական, գիտական թէ հեղինակութիւններ եւ թէ թարգմանութիւններ մօտաւորապէս երկու հարիւր հատորի մատենագրան մը կը կազմեն, որմէն հայ ժողովրդին ամէն դասակարգերը կրնան օգտուիլ: Անոր մէջ երա- խան ալ, նախնական, միջնակարգ ուսում ստացողներն ալ ինչպէս եւ զարգացեալները կրնան իրենց հաճօք պար- գելու և օգուտ հայթոյց այլթղբեր առատօրէն գտնել:

Ամէն հատոր գրաքննութեան կողմէն նախապէս վաւերացուած ըլլալով, Հրատարակչական ընկերութիւնը չէր կրնար զժողովութեան ո՛ր և է պատրուակ իբր զէնք Կովկասի իշխանութեան ձեռքը տալ: Սակայն ուսուսական կառավարութիւնը կործանելով Հրատարակչական Ընկերութիւնը շա՛տ տրամաբանական ուղղութեան կը հետեւի: Բեղրպուրիի Հանրային Կրթութեան նախարարութիւնը երբ ուսսցուց մեր պարագները, կէտ նպատակին էր հայուն հետզհետէ մոռցնել տալ իր մայրենի լեզուն, որ ազգութեան պահպանումին հզօրագոյն սատարն է: Գիրքը գարցնէ շարունակութիւնն է, զայն կ'ոմբողջացնէ. պարօքը ջնջողը գիրքն ալ ջնջելու է, ապա թէ ոչ քանդուժը կիսկատար կ'ըլլայ:

Հայ տպագրութիւնը կամաց կամաց Ռուսաստանէն պիտի ջնջուի: Կովկասեան իշխանութիւնը նախ իր ուժը զօրաւոր հիմն սրկութեանց վրայ կը թափէ: Ո՛չ նախ կը ընտրանանք, ո՛չ եկեղեցական գարցններն էին զոռ նախ ջնջեց, այլ բարձրագոյն վարժարանները, անոնք որ երկրորդական դաստիարակութիւն կուտային: Անկէք ետքը կամաց կամաց սկսաւ միւսներն ալ խլել Հայոց ձեռքէն: Հրատարակչական ընկերութիւնը զօրեղ մարմին մըն էր թէ՛ բարոյապէս զօրեղ, թէ՛ նիւթապէս. սպաննելով զայն, կովկասեան իշխանութիւնը արգէն մահաբեր հարուած մը տուած կ'ըլլայ հայերէն լեզուով ընթերցանութեան: Հրատարակչական ընկերութիւնը միջին հաշուով երկու ամիսը անգամ մը հատոր մը հրատարակ կը հանէր: Իւրաքանչիւր հատոր իր նախորդէն տարբեր ըլլալով բնականաբար մասնաւոր հրատարակում մը իրեն կը քաշէր ժողովուրդը: Հրատարակիչ, ածանցիկ, օգտակար, հաճելի այդ հատորները միշտ հայ ժողովուրդը հայերէն լեզուով մտածելու, հայերէն լեզուով գաղափար փոխանակելու վարժ կը պահէին: Գարցններու ուսուցման շարքը մասամբ, եւ մեծ մասամբ, կը խափանէին: Հիմակ Հրատարակչական ընկերութիւնը այլ եւս չի կայ, ուստի Կովկասի հայերը պիտի զրկուին մայրենի լեզուով կարգուի, խորհելու, գաղափար փոխանակելու շատ նպաստաւոր պայմանէ մը: Անշուշտ հայերէն լեզուով հատոր մը գեռ մերթ ընդ մերթ պիտի երևի, բայց մինչեւ երբ:

«Մինչեւ երբ» հարցումը ինքնիրեն կը ներկայանայ ամէն հայ մտքի: Հայ լեզուով գրքի հրատարակութեան արգելքը բնական հետեանքը պիտի ըլլայ Հրատարակչական ընկերութեան լուծումին: Ի՞նչ էր այդ մարմինն՝ մեղքը. հայերէն գրքերու հրատարակութիւնը: Մեղաւորին ջնջումովը մեղքն ալ ջնջուած չըլլար, երբ ուրիշներ անհասարար զայն շարունակեն այս կամ այն կերպով: Օր մը չէ որ մը Կովկասի կառավարչապետը պիտի հրամայէ չթողատրել հայերէն լեզուով գրքերու տպագրութիւնը, ինչպէս նաև անոնց Ռուսիա ներածութիւնը կամ վաճառումը: Այս աղէտին սպասենք: Սպասենք նաև հայ

Լեզուով թերթերուն մէկիկ մէկիկ խափանմանը, եթէ ինքնիրեննին չզոցուին:

Այս վախերէն ո՛չ մէկը անտեղի է: Թաշվազէն աննշտով այս էջերուն մէջ հրատարակեցինք Կովկասի կառավարչապետին ծրագիրը Հայոց ուսուցմանը համար: Գոյիցին իր խորհուրդները կէտ առ կէտ կը գործադրէ առանց վարանոտութեան: Եւ ո՛ւսկից քաշուի: Բարեգործական ընկերութիւնը ճղակտոր ընելէ յետոյ, Գոյիցին ահա կը սպաննէ և Հրատարակչական ընկերութիւնն ալ: Կազմակերպեալ մարմիններուն անհաշտ թշնամին է, վասն զի անոնք իրենց մէջ ցեղին խտացեալ ուժը կ'ամբարեն: Ուր որ երևի այդ ուժը պիտի հաւաճուի և ըսպաննուի: Եկեղեցի, բարեգործ ընկերութիւն, դրասեր ընկերութիւն, օրագրութիւն հայ ցեղին հոգին վառ կը պահեն, միտքը հայ սնունդով կ'ապրեցնեն, սիրտը հայ սիրով կ'ողողեն, ուրեմն ուսուցման դէմ ահեղ ախոյեան կը կանգնին. պէտք է դանոնք խորտակել, ջախջախել, փշրել:

Ու ի՞նչ կ'ընեն Կովկասի հայերը ազգային ինքնապաշտպանութեան իսմար:



Ֆինլանտա նուազ տարաբաղչ չէ քան Կովկասը և ուսուսական Հայաստանը: Մերքիշտ տը Պրանսի ընդարձակ ուսումնասիրութիւնը որ հրատարակուեցաւ Նոր-Կեանքի 16 թիւին մէջ ընդարձակօրէն, որոշ գաղափար մը կուտայ սգաւոր երկրին վրայ որուն աղէտները արգէն ծանօթացուցած էինք: Եւրոպա հասած վերջին լուրերը կը տեղեկացնեն թէ ուսուցման գործը երկաթէ ձեռքով առաջ կը տարուի: Ահաւասիկ ինչ որ Ֆինլանտայի մայրաքաղաքէն, Հէլսինկիֆօրէն, հոկտեմբեր 2 թուականով կը գրեն անգլիական թերթերուն:

«Ռուսական իշխանութիւնը Ֆինլանտայի մամուլին ոչ միայն ազատութեանը այլ գոյութեանը դէմ իսկ իր պատերազմը ծայրայեղ խստութեամբ առաջ կը տանի: Քիչ ատենէն այլ եւս պէտք պիտի չտեսնուի մամուլի գրաքննիչներ պահելու, այն պարզ պատճառաւ որ այլ ևս թերթ գոյութիւն պիտի չունենայ որպէս զի դրաքննուի:

«Կուսակալը այսօր «մշտնջենապէս» ջնջեց Աֆրոնքոսքը որ Նիյա Բրեսսէնի ջնջուելէն ի վեր Մեծ-Դքսու, թեան մէջ Շուեստ լեզուով էն ազգեցիկ թերթն էր: Առայժմ գեռ թողատրուած է Շուեստերէն պատիկ թերթի մը Հելսինկիֆորս հրատարակութիւնը, պայմանաւ որ քաղաքական խնդիրներու պիտի չխառնուի:

«Այս վերջին ճնշումը բնականաբար աւելի զօրացուց զայրոյթի զգացումը զոր գրգռած էին վարչական նախորդ ընտրութիւնները: Անոնք կը ձգտէին չթողատրել ուսուցման քաղաքականութեան հակառակող ո՛ր և է կարծիքի արտայայտութիւն:»

Անգլիական թերթերը երկարօրէն կը պատմեն Ֆինլանտական օրէնքներուն եւ սահմանադրութեանը ջնջումին համար ձեռք առնուած սիջոցները: Ասոնց մանրամասնութիւնները արդէն մեր ընթերցողներուն ծանօթ ըլլալով անոնց կրկնութեանը հարկ չենք տեսներ:

Իսկ նորանոր լուրեր կը շրջագային, մէկը միւսէն աւելի վտանգաւոր Ֆինլանտայի համար: Այսպէս, կ'ըսուի թէ յունադաւանութիւնը Մեծ-Դքսութեան պաշտօնական կրօնքը պիտի հռչակուի, իսկ բողոքականութիւնը պիտի թողարտուի իբր ներելի կրօնք մը. արդ Ֆինլանտացիներուն հարիւրէն իննսուննութը Բողոքական են, հետևաբար ազգին չունեցած կրօնքը պիտի նկատուի պետական կրօնք: Ասկէ զատ՝ ոուս լեզուն պարտաւորիչ պիտի ըլլայ երկրորդական աստիճանի կրթութիւն տուող դպրոցներուն համար, ճիշտ ու ճիշտ կովկասի հայ վարժարաններուն բաղադրից պիտի ըլլան Ֆինլանտականներն ալ: Նաև՝ կուսակալը պիտի արտօնուի աքսոր զըրկել ո՛ր եւ է անձ որ իրեն քաղաքականապէս կասկածելի երևի:

Սակայն մինչ կովկասի Հայերը ոչխտրաբարոյ հլուութեամբ զուլնին կ'երկնցնեն ոուսական սուրին առջեւ, առանց ըմբոստման ո՛ր եւ է ցնցումի, անգին Ֆինլանտացիները մաքառումի պատրաստութիւնները կը տեսնեն: Մարտնչումը կ'ամրապնդէ հալածուած ժողովրդի մը հոգին: Ֆինլանտան պիտի կորոնցնէ իր ազգային հիմնարկութիւնները, իր իրաւունքները, բայց Ռուսիոյ դէմ ատելութիւնը զինքը աւելի քան երբեք Ֆինլանտացի պիտի պահէ:

Գաղտնի տպարան մը հաստատելու նախապատրաստութիւնները կը տեսնուին: Ինչ որ մինչեւ հիմակ ակներև կը հրատարակուէր ասկէ ետքը ծածկաբար պիտի տպագրուի, բնականաբար կատաղութեան ուժգնութեամբ: Յեղափոխական գրականութիւն մը արտասահմանէն Ֆինլանտա պիտի թափի: Ֆինլանտա կը պատրաստուի կոուի, թէև իր հոգին խաղաղուսը է: Ազգային կեանքի պահպանութեան տեսչը հզօրապէս պիտի ազդէ ցեղային նկարագրի այլափոխման: Վտանգը կորով պիտի ստեղծէ:

Իսկ ոուս իշխանութիւնն ալ իր պինուորական ուժին կ'օժնած յաղթանակել կը յուսայ: Խոզախներու ջոկատները արդէն ոկսած են հաստատուիլ Հելսինկֆորս, Ապօ, և ամէն բազմամարդ կեդրոններ:

Քաղաքակիրթ աշխարհը անգամ մը ևս հանդիսատես պիտի ըլլայ ասի մը ժողովրդի դիցազնական պայքարին ընդդէմ ահաբեկի բիրտ ուժին: Բայց կը հատանք որ Ֆինլանտա իր ընդդիմադրութեամբը պիտի կարծնայ ապրիլ, մինչեւ որ ժամանակը օգնութեան հասնի իրեն:

Պիտի գա՞յ օրը որ կովկասեան հայերն ալ սքանչա-

ցումի արժանանան, փոխանակ կարեկցութեան:— Կ'ըզձանք առանց շատ յուսալու:

ՄԻՋ ՍԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբեր 20, շաբաթ, կէս օրին Լոնտոն հաճելի յանկարծականի մը հանդէպ գտնուելու բաղաւորութիւնը ունեցաւ: Միջօրէին Երեթերը կը ծանուցանէին Գերման եւ Անգլիական համաձայնութիւնը Չինաստանի խնդրին համար: Այս նիզակակցութեան լուրը աշխարհի չորս կողմը հեռագրուելով մեծազորող ազուակ յարոյց: Եւրոպայի եւ Ամերիկայի մամուլը հիմակ ուրիշ ո՛ր եւ է խնդիր երկրորդական կարևորութիւն ունեցող կը նկատէ, եւ այդ համաձայնութեան բոլոր հետեւանքները նախատեսելու զբաղած է: Ամէն ժողովուրդ կ'ըմբռնէ թէ Եւրոպայի քաղաքականութիւնը կ'ենթարկուի ուղղութեան մը որ Եւրոպայի եւ Ասիոյ համար նոր թուական մը կըրնայ բանալ:

Անգլիա եւ Գերմանիա համաձայնած են որ Չինաստանի նաւահանդիստները, զետեքը, ծովեզերքները առանց խարսիսեան աշխարհիս բոլոր ազգերուն առջեւ բաց պիտի մնան, վաճառականութեան եւ տնտեսական ո՛ր եւ է օրինաւոր գործունէութեան համար: Երկու կառավարու թիւնները համաձայնած են որ այս մէկնոյն քաղաքակա նութիւնը պաշտպանեն ամբողջ Չինաստանի հողին վրայ, որ ըշափ ընդս ըձակօրէն որ կրնան իրենց ազդեցութիւնը բանեցնել: Երկու կառավարութիւնները Չինաստանի սրբի իսոնակութիւններէն պիտի չ'օգտուին իրենց սեփական շահեր ապահովելու համար. քաղաքականութիւններն պիտի նկատի շինական կայսրութեան արդի հողային կացութիւնը անփոփոխ պահելու: Իսկ եթէ ուրիշ կառավարուի ին մը ուզէ օգտուիլ այս կրնճոտութիւններէն որպէս զի հողային առաւելութիւն մը ձեռք ձգէ, այդ պարագային երկու պետութիւնները պիտի սխրաւին Չինաստանի մէջ իրենց շահերուն պաշտպանութեանը համար:

Այս համաձայնութեան սեզեկութիւնը թէ՛ Լոնտոն եւ թէ՛ Պեքին միւսին ժամուն հրատարակուեցաւ: Ինչպէս անգլիացիները նմանապէս եւ գերմանացիներն ալ ամենասեծ գահունակութիւն զգացած են: Եւ ինչպէս յայտնի կըլ աւելուի, միւս պետութիւնները իրենց համար ալ պիտի ընդունին անկլօ-գերման համաձայնութեան պայմանները որոնք Ֆրանսայի այտաքին գործերու նախարար Պ. Տէլլաուէի վերջին առաջարկութեանց շեւ գրեթէ միևնոյնը կրնան համարուիլ: Անգլիոյ կա-

ուսմարական մասուլը կը յայտարարէ թէ այս դաշնա-  
 դրութիւնը ուղղուած չէ ո՛ր և է պետութեան մը դէմ: Անգ-  
 լիա եւ Գերմանիա նկատելով որ Չինաստանի արդի  
 կնճոռ կապութիւնը անպայմանօրէն երկարատեւելու վը-  
 տանգը կը սպառնայ, միշտ այս կամ այն պետութեան  
 կողմէն ներկայացուած նորանոր առաջարկութիւններու  
 պատճառաւ, ուզած են որ նախ եւ առջ իրենց իրենց  
 մէջ որոշ ուղղութիւն մը ունենան, յստակ կերպով գտնել  
 իրենց պահանջումներուն սահմանները, և միւս պետու-  
 թիւնները գործնականապէս անոր շուրջը բոլորեն:

Արդէն Աւստրիա, Իտալիա, Ճարճոն, Միացեալ-  
 Նահանգները իրենց եւս անկլօ-գերման համաձայնու-  
 թեան պայմաններուն համեմատ վարուելու համար ի-  
 րենց հաւանութիւնը տուած են. Ֆրանսա հակառակելու  
 պատճառ մը չունի. Իսկ գալով Ռուսիոյ՝ Սրբաւարտ կը  
 հաղորդէ թէ Բեյրպուրկի զահլիճին նախօրօք պաշտօ-  
 նապէս ծանուցուեր է թէ երկու պետութիւնները որոշ  
 համաձայնութեան մը հանգելու նպատակաւ բանակցու-  
 թիւններ կը կատարեն: Եւ եթէ ստորագրուած պայմա-  
 նագրութիւնը Բեյրպուրկ չէ զրկուած, պատճառը կայսեր  
 և արտաքին գործերու նախարարին բացակայութիւնն է:

\* \* \*

Անկլօ-գերման համաձայնութեան միջազգային ա-  
 հագին կարեւորութիւնը չինական խնդրին մէջ չսահ-  
 մանափակուիր: Ակնբերել կը տեսնուի որ ծովային եւ  
 ցամաքային երկու մեծ պետութիւնները այսուհետեւ զաշ-  
 նակիցներ են, համանման շահերու պաշտպանութեան  
 համար: Հետեւաբար կարելի է նաև ընդունիլ որ Երրեակ  
 Նիզակակցութիւնը վերածուած է Գառնակի:

Անգլիական մասուլը թէև անկլօ-գերման նիզակակ-  
 ցութիւնը իբր կատարուած իրողութիւն մը չի հռչակեր,  
 բայց կը հասկցնէ թէ երկու մեծ պետութիւնները սերտ  
 իացած են: Սրբաւարտ, պահպանողական մեծ թերթը,  
 որ նախարարութեան բերանը կրնայ համարուիլ, կ'ըսէ,  
 «Անգլիա եւ Գերմանիա, որոնցմէ մին՝ աշխարհիս մե-  
 ծագոյն նաւատորմը, և միւր՝ հզօրագոյն բանակը ու-  
 նին, երբ կը միանան ու մէկտեղ կը գործեն, կրնանք ըն-  
 դունիլ թէ Մայրագոյն-Արեւելքի ամպերը արդէն փարա-  
 տիլ սկսած են:»

Ակնարկելով ապագային՝ Սրբաւարտ կը յայտա-  
 րարէ որ «Անկլօ-Սաքսոն և Տետոնեան ժողովուրդները  
 երբ կրնան Չինաստանի մէջ միասին գործել, պիտի ըմ-  
 բռնեն թէ ուրիշ տեղուանց ալ կարող են իրարու օգնել:  
 Վերջին գէպերուն Գերմանիոյ մէջ ընդդէմ Անգլիոյ  
 յարուցած յուզումը հանդարտելով, խորին համոզում կը  
 տիրէ թէ աշխարհիս երեսը չեն գտնուիր ուրիշ երկու ազգ  
 ալ որոնք շահերու այսքան նոյնութեամբ կարենան իրա-

րու կապուիլ, եւ ուրիշ ոչ երկու ազգ աւելի աններելի  
 յանցանք գործած կ'ըլլան իրարմէ ցրտանալով, կամ ի-  
 րարու հակառակելով քան Անգլիա և Գերմանիա:»

Կառավարական թերթին Պերլինի թղթակիցը այս  
 յօդուածին հրատարակման յաջորդ օրը Գերմանիոյ մայ-  
 րաքաղաքէն արձագանգ կուտար այդ գաղափարներուն,  
 հեռագրելով թէ «ձեռնհասութիւն ունիմ յայտարարելու  
 որ Սրբաւարտ կատարելապէս իրաւունք ունէր ըսելու  
 թէ շատ չանցած Չինականին նման ուրիշ համաձայնու-  
 թիւններ ալ պիտի կատարուին աշխարհիս ուրիշ մասե-  
 րու նկատմամբ:»

Տէյլի Նիշոյ և ուրիշ թերթեր ալ իրենց տեղեկութիւն-  
 ներով կը հաստատեն Սրբաւարտի հաւաստումները: Եւ  
 սակայն աշխարհիս ո՛ր մասերուն մէջ. միայն Հարաւային  
 Աֆրիկէ՞ թէ նաև Թիւրքիա եւս: Սպասենք,

\* \* \*

Ֆրանսայի մէջ մասնաւոր ջանքեր ի գործ կը գրուին  
 հաստատելու համար թէ անկլօ-գերման համաձայնու-  
 թիւնը Ռուսիոյ երեսին զարնուած ապտակ մըն է: Թէ՛  
 անգլիական և թէ՛ գերմանական թերթերը կը հերքեն այս  
 ամբաստանութիւնները: Տէյլի Նիշոյ Պեքլինէն ընդար-  
 ձակ հեռագրով մը կը ջրէ այս բոլոր հակառուս գրուց-  
 ուածները: «Գերմանիա, կ'ըսէ ազատական թերթը, անձ-  
 կուլթեան մէջ չէ Ռուսիոյ պատասխանին համար: Գեր-  
 ման զահլիճը արդէն շատ ազէկ գիտէ թէ Ռուսիա ինչ  
 կը խորհի ի մասին այս համաձայնութեան, որուն տը-  
 րամադրութեանցը անշուշտ առաջուց տեղեակ էր, նախ  
 քան վերջնական կարգադրութիւնը:

Թէ անգլիական և թէ՛ գերմանական մասուլը կը ջա-  
 նան որ Անկլօ-Գերման համաձայնութիւնը իբր հակա-  
 ուս քաղաքականութեան մը յայտարարութիւնը չի նը-  
 կատարի: Գերման թերթերը կը հաւատեն թէ արդէն  
 ուրիշ համաձայնութեամբ մըն ալ Գերմանիա Ռուսիոյ  
 ձեռքերը անկաշկանդ կը թողու Հիւսիսային Չինաստա-  
 նի մէջ: Տէյլի Նիշոյ և ուրիշ թերթեր կը կարծեն թէ Բե-  
 յրպուրկի զահլիճը ոռ այժմ դիտաւորութիւն չունի Ման-  
 չուրիան ուսական կայսրութեան միացնել:

Մօրեհին Բօսք ծայրայեղ պահպանողական մեծ թեր-  
 թը, Մանչուրիի արդէն Ռուսացմանը ո՛ր և է տարակոյս  
 չունի: Իրաւ է որ այդ ահագնատարած նահանգը պաշ-  
 տնապէս Ռուսիոյ կցուած չէ, որով Անկլօ-Գերման հա-  
 մաձայնութեան երրորդ յօդուածը Ռուսիոյ կողմէն ըն-  
 դունուած և յարգուած կրնայ համարուիլ: Սակայն, կը  
 յաւելու Լոնտոնեան թերթը, հիմակ երևոյթները փրկե-  
 լով է որ պետութիւն մը կը գրաւէ ուրիշ պետութեան մը  
 հողերը: Ժիւլ Ֆէրի, Ֆրանսայի նախարարապետը որ  
 թունուզը իր հայրենիքին միացուց, սքանչելապէս բա-  
 ցատրած է ուրիշին երկիրները գրաւելու նոր գրութիւնը:

«Իշխանութիւնդ հաստատէ հոն որչափ ուժնութեամբ որ կրնաս, բայց երբեք մի գործածեր գրաւում, տիրապետութիւն, ստացում բացատրութիւնները:» Եւ ահա Ռուսիա այդ խրատին կը հետևի Մանչուրիի մէջ, որով անկախ-զերման համաձայնութեան հակառակած չ'երևիր:

Ուրիշ պատճառ մըն ալ կայ որ Մանչուրիին Ռուսացմէ գրաւումը իբր ստոյգ իրողութիւն մը ընդունիլ կուտայ: «Ռուսիան, կ'ըսէ Մօրէիկէի Բօսք, անշուշտ արդէն պայմանագրութիւն մը կնքած է Գերմանիոյ հետ, այս պետութիւնը սովորութիւն ունենալով միևնոյն ատեն թէ մէկ և թէ միւս կողմին հետ համաձայնիլ: Հիմակ Գերմանիոյ քաղաքականութեան առաջին սկզբունքն է Ռուսիոյ հետ կոուի չբռնուիլ:»

Ռուսիան գահացնելով և իրենց ալ իրենց մէջ համաձայնելով պետութիւնները շինական խնդրին ծանրածանր դժուարութիւնները վերջնապէս հարթած կ'ըլլան: Այս կարգադրութիւններով Եւրոպա այլ եւս անվրդով խաղաղութեամբ ապրելու ապահովութիւնը կունենայ:

Արևելքի քրիստոնէից վիճակին բարւոքումը Եւրոպայի ստիպողական կարեւորութիւն ունեցող խնդիրներուն կարգը կը գտնուի: Յուսանք թէ այդ խնդիրն անմիջական լուծում գտնելով, Եւրոպա այլ ևս թիւրբիոյ կողմէն ալ վրդովման ո' և է կասկած չունենար, և հանգիստ կը մնայ, գոնէ երկար ատենի մը համար:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Վանի մեծ որբանոցը, որ 300 մանչ և 200 աղջիկ կը պատուպարէ, Տր. Բէյնուլտգի անօրէնութեան տակ անխափան կը յառաջդիմէ: Գպրոցական ամսվերջի բռնութիւնները շատ յաջող անցեր են: Աղջկանց բարձրագոյն վարժարանէն չորս որբուհի շրջանաւարտ ելեր են:

Գոհացուցիչ երևոյթը որ կը տեսնուի Վանի մէջ այս որբանոցին շուրջը, այն համերաշխութեան ոգին է որով Լուսաւորչական ու Բողոքական կը գործակցին՝ այդ հաստատութեան համար: Երբ անցեալ տարի 13 որբ շրջանաւարտ ելան, Տր. Բէյնուլտգ հրապարակաւ յօժարութիւն եւ փափաք յայտնեց որ այդ տղաքը կեանքին մէջ առաջ երթան իբր Ազգային Եկեղեցիին հաւատարիմ անդամներ, և աշխատին իրենց ժողովրդին զարգացմանը: Ատկից ի վեր նոյն ուղղութեամբ յայտնուած փափաքները և եղած ջանքերը իրենց նուիրագործումը ունեցան այս տարի: Վանի առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս, սր ներկայ էր քննութեանց, «շատ սրտազին շեշտերով խօսեցաւ, կ'ըսէ Տր. Բէյնուլտգ, մեր կատարած թէ՛ բարե-սիրական և թէ՛ կրթական գործին վրայ: Ըսաւ թէ խորապէս համոզուած է որ մեր նպատակն էր Հայ ժողովրդին բարեքը, և թէ մենք ծածուկ գիտաւորութիւններ չունէինք. մենք ազգին զաւակները կ'առնէինք, անոնց ճշմարտապէս լաւ և օգտակար կրթութիւն մը կուտայինք, և զանոնք նորէն ազգին կը դարձնէինք: Ուստի, ըսաւ, «այս դպրոցը ձեր դպրոցն է, այս սենեակը ձեր սենեակն է», և հրապարակաւ ձեռքս սեղմեց, թէ՛ անձիւն և թէ՛ մեր գործին համար մեծ դրուատիքներով: Անշուշտ գիտէր թէ իր խօսքերը իբր պաշտօնական պիտի նկատուէին, և թերթերուն մէջ պիտի հրատարակուէին, եւ զանոնք պիտի շարտարբերը առանց խնամոտ ուշադրութեան: Բանախօսութիւնը կը միտէր պաշտօնական նուիրագործում մը տալու համերաշխութեան, գործակցութեան շարժումին, և այդպէս ալ ընդունուեցաւ հանդի-րականներէն. ներկայ ամէնէն ազգեցիկ անձերէն շատը եկան մեաք բարովի ատեն հաւանութիւններն յայտնեցին ինձի եպիսկոպոսին վարժունքին համար:»

Քննութիւնները աւարտելէն յետոյ, Տր. Բէյնուլտգ այցելութեան գոցած է երեք դիւղ ուր անցեալ տարուան շրջանաւարտներէն երեք որբ ուսուցչութիւն կ'ընեն: Ասոնցմէ մին, Եղիազար Ռշտունեան, Նարեկի մէջ կ'աշխատի, և իբր 90 աշակերտ ունի: Նարեկի վանքը, ատկից գատ, որբանոց մը կայ 25-30 որբով: «Նարեկի վարժարանը, կ'ըսէ Տր. Բէյնուլտգ, քաղաքէն դուրս նահանգին ամէնէն մեծ և ամէնէն յառաջադէմ վարժարանն է, և ասոր պատճառը ան է որ զիւր հակառակ միւս գիւղերուն մեծ մասին, շատ տարիներէ ի վեր գէշ աղէկ դպրոց մը ունի: Հետևաբար, թիչ շատ պատրաստուած տղաքներ կային. և Ռշտունեան լոկ նախակրթիչ մը եղած չէ: Բարձրագոյն դասարանը, որ հինգ աշակերտէ կը բաղկանար, գոհացուցիչ յառաջդիմութիւն ըրած էր: Այդ տղոցմէն մին հազիւ վրան զլուխը ծածկելու չափ հագուստ ունէր. և ամբողջ տարին կէտ-կուշտ կէտ-անթի ապրած էր, և սակայն դասին առաջիններէն էր: Ստորին կարգերուն մէջ, արթուն ու յանկուցիչ զէմբով շատ տղաքներ կային որոնք լաւ քննութիւն անցուցին: Իրենց անբաւական հապուստը և նիհար մարմինները ապացոյց էին իրենց ամենախոր աղքատութեան և յաճախակի զըրկանքներուն:»

Տր. Բէյնուլտգ ուրախութեամբ կը հաստատէ թէ՛ զըրոցին մէջ, եւ թէ՛ դուրսը գիւղացիներուն մէջ, երկտասարկ ուսուցիչը կ'աշխատի բարեբրուն օգնուցման եւ բարոյացման:

Տր. Եւզըր, որ տարի է մը ի վեր Վան կը գտնուի, Տր. Բէյնուլտգի եւ կնոջը կատարած գործին վրայ խօսելով, հրաշալի կը գտնէ զայն: Կ'ըսէ թէ Վանի մէջ Հայերը այժմ «երկրորդ Լուսաւորիչ» կ'անուանեն զինքը: Ժողովուրդը հասկցած է թէ անոր նպատակը

Հայերը բողոքական զարձնել չէ, հապա քրիստոնէութեան ուրիշ ներշնչել իրենց: Իր վանի որբանոցէն ելած տասնընթիւս երիտասարդ այսօր դպրոց կը պահեն 14 հայ գեղի մէջ:


Տր. Եււլըր կ'ըսէ թէ, միսիոնարութեան բժշկական ճիւղը ընդարձակուելու վրայ է: Տուն մը վարձած և հիւանդանոցի վերածած են, ուր ֆիւրտեր ալ կը դիմեն:

\* \* \*

Այնթապի Գոլէճէն այս տարի 11 տղայ շրջնաւարտ ելած են, 6ը բողոքական և 5ը լուսաւորչական: Ասոնց մեծ մասը ուսուցչութեան կը պատրաստուին:

Այնթապի ամերիկեան հիւանդանոցին վերջին 10 ամսուան մէկ տեղեկագրէն կը տեսնուի թէ Տր. Շէ. բարտ, Տր. Պէզճեան և Տր. Տիկին Համիլըրն 43,331 անգամ հիւանդ նայած են հոն այդ շրջանին:

ՄԱԿԵԴՈՆԻԱ



Եւրոպական մամուլը վերջին շաբաթներս Մակեդոնացիներուն յեղափոխական կազմակերպութեանը եւ գործունէութեանը վրայ ուշադրութիւն դարձուց: Ռուսմանիսյ մէջ կատարուած քաղաքական երկու սպաննութիւն եւ նոյն երկրին թագաւորին զէմ գաւաղութեան մը ամբաստանութիւնը Պուքրէշ գատաստանի տեղի տալով Մակեդոնական քոմիթէն հետաքրքրութեան առարկայ դառնաւ:

Վիեննայի թերթ մը հրատարակեց Սոֆիայի Մակեդոնական քոմիթէին կազմակերպական կանոնադրին զըլխաւոր կէտերը, որոնցմէ քաղուած մը կ'ընենք:

Պուլկար-Մակեդոնական քոմիթէին նպատակն է աշխատիլ որ Մակեդոնիան կատարելապէս անկախ ըլլայ, Մեծ-Պետութեանց հովանաւորութեանը ներքեւ: Այս առաջադրութեան իրականացումին համար յեղափոխական քոմիթէնի պիտի կազմուին եւրոպական թիւրքիսյ մէջ, որպէս զի ժողովուրդը ապստամբութեան պատրաստեն:

Սոֆիայի Մակեդոնեան կեդրոնական ֆոմիթէն պաշտօն ունի լաւ յարաբերութիւններ մշակել Պուլկար կառավարութեան և Մակեդոնեան յեղափոխական շարժումին միջև: Այդ քոմիթէն է որ Պուլկարի բնակող բոլոր Մակեդոնացիներուն սպառազինութեանը համար հոգ կը տանի: Ուղղութիւն կուտայ Պալքանեան թերակղզիին բոլոր մասնախումբերուն եւ կը հսկէ անոնց վրայ: Թեղափոխութեան պաշտօնաթերթը կը հրատարակէ: Կեդ-

րոնական ֆոմիթէին կը գործակցին տեղական բոլոր խումբերը, որոնք երեսունէն հարիւր անգամ ունին: Տեղական խումբերուն գործն է ամէն միջոցներով դրամ ձեռք ձգել հարուստ քաղաքացիներէն, գործադրել կեդրոնական ֆոմիթէին մահալիճիները, եւ հնազանդիլ այս վերջինի հրահանգներուն: Ամէն խումբ իր տրամադրութեան ներքեւ ունի սպառազինեալներու մարմին մը, ինչպէս նաև իր ներքին ոստիկանութիւնը որ երկու ճիւղի բաժնուած է, մին՝ լրտեսութեան գործը կը կատարէ, միւսը՝ տրուած հրամանները կը գործադրէ:

Իւրաքանչիւր Մասնաճիւղ ինք կ'որոշէ թէ իւրաքանչիւր անհատ ինչ գումար պիտի վճարէ Մակեդոնական սուրբ դատին: Ըստ այնմ ալ կը պահանջուի, մահուան սպանալիքով: Սյս ծայրայեղութեան դիմուած շատ քիչ անգամ տեղի կուենայ, վասն զի ամէն մարդ որմէն դրամ կուզուի, լաւագոյն կը համարին վճարել քան թէ սպանալիքի մը վտանգներուն ենթարկուիլ: Ինչ գումար որ հաւաքեն Մասնաճիւղերը կեդրոնական ֆոմիթէին կը ղրկեն:

Ֆոմիթէն ինք կը գնէ ռազմամթերքը եւ թրքական սահմանազուխը կը ղրկէ: Այս գործողութիւնը Պուլկար կառավարութեան աջակցութեամբ կը կատարուի: Իսկ սահմանազլխէն մասնաւոր կարգադրութիւններովներս կը փոխադրուին սուր, հրացան, վեցհարուածեան, ուսմբ, ուժանակ:

Ամէն մէկ Մասնաճիւղի նոր անդամը կը «Մկրտուի»: Այս Մկրտութիւնը կը կատարուի հետեւեալ կերպով: Նոր անդամը զուխը կը բանայ, կը խաչակնքէ երեսը, կը համբուրէ իր վեց հարուածեանը եւ «սուրբ գրութիւնը» յեղափոխական շարժումին: Անկէ ետքը հետեւեալ երգումը կ'ընէ: «Կ'երդնում յանուն Ատուածոյ եւ իմ պատուոյս աշխատիլ Մակեդոնիոյ ազատութեանը համար մինչև վերջին շունչս: Ինձի վստահացուած գաղանիքները եթէ երբեք մատնեմ, կամ լքանեմ սուրբ դատը, նովին գործով ամէն Պուլկարի իրաւունք տուած կ'ըլլամ զիս այս վեցհարուածեանովը սպաննել: Մեր Հայրենիքին խորանին վրայ կը դնեմ իմ կեանքս եւ մեր ազգային դատին համար պիտի կուտիմ ցորչափ կեանքի կայծ մը պըլպըլայ հողուս մէջ:»

Կեդրոնական ֆոմիթէն տեղական Մասնաճիւղերուն հետ համաձայնութեամբ պատիժներ կ'որոշէ անոնց համար որոնց Մակեդոնական սուրբ դատին թշնամութիւնը կը հաստատուի: Ամէն անհատ պուլկար ըլլայ թէ ոչ-պուլկար, որ սուրբ դատին առջեւ խոչնդոտ կը կանգնի կրնայ մահուան դատապարտուիլ: Վճիռը կը գործադրուի քոմիթէին միջոցաւ:

Կազմակերպական կանոնադրը մանրամասնօրէն գրծած է յեղափոխական շարժումը ստեղծելու բոլոր մեթոտները ինչպէս նաև գործունէութեան բոլոր միջոցները:

Աստրիական մամուլը կը պահանջէ որ Պուլկար կա-  
ռավարութիւնը լուծէ Սոֆիայի յեղափոխական քօմիթէն,  
ինչպէս նաև Պուլկարիոյ մէջ գտնուած բոլոր Մասնա-  
ծիւղերը: «Մակեդոնիոյ անկախութեան գաղը այս օ-  
րինակ բանաբարական մեթոտներով չէ որ պիտի յաղ-  
թանակէ» կը գրեն թերթերը. ու կը պահանջեն որ թիւր-  
քիոյ եւ Պալքանեան պետութեանց կառավարութիւնները  
միաբանութեամբ գործեն, միանգամ ընդ միշտ ջնջելու հա-  
մար այդ քաղաքական ահաբեկիչ պրօլետարիւնը:

Բեռլին-Լոյտ կէս-պաշտօնաթերթը խմբագրական  
յօդուածով կը գատապարտէ Մակեդոնեան Յեղափոխա-  
կար քօմիթէին գործունէութիւնը զոր վտանգաւոր կը  
գտնէ: Կը հաւաստէ թէ այդ ահեղ կազմակերպութիւնը  
ոչ միայն Ռուսիոյ եւ Սերպիոյ թագաւորներուն մահը  
ծրագրած է, այլ և բազմաթիւ ուրիշ անհատներուն ալ,  
որոնք կը մերժեն իրենցմէ պահանջուած գումարները  
տալ:

Բեռլին Լոյտ, Մակեդոնեան քօմիթէն Անիշխանական  
կազմակերպութիւն մը կը նկատէ, քն վտանգաւոր տե-  
սակէս: Խնդիրը իրեն ծանր կը թուի յատկապէս այն նը-  
կատուով որ Պուլկարական կառավարութիւնը տեսակ  
մը համաձայնութեան մէջ ըլլալ կը կարծուի «այդ վարձ-  
կան մտահատներու վճարակին հետ, որ Մակեդոնիոյ ա-  
նունը անարգ նպատակներու համար կը շահագործեն:»

Պաշտօնաթերթը բացարձակօրէն կը պահանջէ որ  
Ֆերաիանաւ իշխանը ինքզինքը ամէն կասկածէ ազատէ,  
անմիջական ազգու միջոցներ ձեռք առնելով ընդդէմ քօ-  
միթէին: «Պուլկարական կառավարութիւնը, կ'ըսէ Հուն-  
գարական թերթը, կամ պէտք է ջնջէ այդ շարժումը,  
կամ պէտք է բարոյապէս պատասխանատու բնուի Յե-  
ղափոխական Քօմիթէին ասկէ ետքը գործելիք ոճիրնե-  
րուն համար:»

Մակեդոնական քօմիթէն իր գործունէութեանը վե-  
րաբերեալ յայտարարութիւն մը հրատարակեց. ի միջի  
այլոց կ'ըսէ թէ, ո՛չ յոյն քօմիթէներուն, ոչ Երիտ ստարտ  
թիւրքերուն իեռ կարելի է համաձայնութիւն յայտնել  
բացի Հայկականներէն:

ԿՈՒՐԵՐ

**ՉԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** Սեպտեմբեր 6-էն ի վեր  
Պոլիս մէկ կողմէն Հայոց ձերբակալութիւններ կը կա-  
տարուին, միւս կողմէն արձակուելու տեղի կ'ունենան:  
Վերջին լուրերուն համեմատ հարիւր Հայ, գլխաւորապէս  
օտարապաշտներ, Պոլսէն արտաքսուելով իրենց երկիր-  
ները դիմելու են: Ասուց վրայ կասկած կը ծանրանայ  
եղեր թէ խաներու մէջ յեղափոխականներ կը պահեն:  
Անցեալ շաբաթ յիսուն հայ արձակուելու են, բայց շա-  
տեր տակաւին բանտը կը մնան, եւ նորեր կուզան  
մեկնողներուն տեղը կը բռնեն: Հոկտեմբեր 23 քուս-  
կանով հեռագիր մը կը ծանուցանէ թէ նախընթաց օրը,  
դեսպանական միջատուտքեամբ, 40 բանտարկեալ եւս  
ազատուելու են, ու արտաքսուածներէն 60 հայ Պոլիս  
վերադասնայ արտօնուելու են:

**ՏՐ. ՔՕԼՕԼԵԱՆ.** Չղայիս եւ մտաւորական հի-  
շակողներէն ոչ ոք չ'արտօնուելու ճիշտութեամբ ճիշտ  
սակեան մեծ ամսաթերթիս, «Արշիվ տը Եօրօջօթի» ի  
մեր աշխատակից Տր. Քօլօլեան կը շարունակի իր անձ-  
նական դիտողութեանց և հետազոտութեանց արդիւնքները  
բովանդակող յօդուածներու շարքը: Իր վերջին աշխա-  
տութիւններէն են «Արեան բռնաշարժը շուտօտու-  
թեան մէջ», «Չայնական բանդագողները աչքըս-  
կանութեան մէջ», «Ուղեղի պատեանի զերագրգոտքիւնը  
սուր աչքըսկանութեան մէջ» աշխատութիւններ որոնք  
պատիւ կը բերեն երիտասարդ հայ գիտնականին:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱԳՉ** էֆեկտի, սուրբանիս անձնա-  
կան գանձուն նախարարը հրաժարական տուած էր.  
բայց սուրբանը մեծապարգէտ ընծայելով պարտաւորե-  
ր է հայ պաշտօնատարը շարունակել իր գործը:

ՀԱՍՑԷ ԵՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին  
եւ 15 ին: Բաժնեգինն է Երոպայի համար տարեկան 10  
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2  
ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին  
դրկել ա՛:

L. FRANK,  
27, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.